№ 4 1 ՓԵՏՐԻԱՐ 1896

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՎՃՌՈՂԸ ԿՌԻՆ Է

—

Տաճկահայաստանում տեղի ունեցած սարսափելի կոտորածից յետոյ, սուլթանի կառավարութիւնը պէտք էր ամենայն իրաւամբ յուսար, որ եթէ յեղափոխական շարժումը չմեռցրեց, գոնէ նրան խեղդեց։ Բայց ինչպէս միշտ, այս անգամ էլ թշնամականը սխալուեց իւր հաշիւների մէջ. յեղափոխական շարժումը շարունակւում է իւր նախկին ուժով, նա մի րոպէ կանգ չէ առել։ Եւ ի՞նչպէս կարող էր կանգ առնել. չէ՞ որ դրանում է կայանում ամբողջ տաճկահայ ժողովրդի գոյութիւնը, չէ՞ որ դա է վճռելու նրա ճակատագիրը։ Յեղափոխական շարժումի, ներկայ կռւի ելքից է կախւած հայ ժողովրդի ապագան. այս մենք մի քանի անգամ ենք ասել։ Եւ այսպէս լինելուց յետոյ, մի յեղափոխական կազմակերպութիւն, յեղափոխական մի կուսակցութիւն, որը գոյութեան իրաւունք է ստացել՝ որովհետև յեղափոխական մարմին է, որը մինչև կոտորածը իւր գործունէութեամբ՝ թէ ներքին նահանգներում և թէ մայրաքաղաքում ցոյց է տուել իւր ոյժը ու կռւելու ընդունակութիւնը, որ գործում է յանուն ժողովրդի և միշտ նրա հետ է, ի՞նչպէս կարող էր աղէտի ժամանակ դադարել, ձեռնպահ մնալ։

Այն ժամանակ, երբ սարսափը տարածւել էր ամեն կողմ, երբ ժողովուրդը ահաբեկւած յուսահատւել էր, հենց այդ ժամանակ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը իւր հայդուկային խմբերով ու ահաբեկիչներով երկրի զանազան կէտերում թշնամու դէմ կռւում, ժողովուրդը պաշտպանում էր։ Այո՛, ճիշտ է, որ մերը, ինչպէս ասել ենք, թշնամու արածի հետ չնչին է։ Բայց ո՞վ է մեղաւորը, ո՞վ է մեղաւորը, որ մենք անկարող եղանք պահանջի համեմատ օգնութեան հասնել։ Մեղաւորը նա է, որ մեզ եռանդուն կերպով, մեծ շրջանով չաջակցեց, ոյժ չտւաւ, որպէս զի Դաշնակցութիւնը իւր գործունէութեանը աւելի լայն ծաւալ տար, որպէս զի նա կարողանար զինել ժողովրդին և ամեն կէտերի վրայ հայդուկային խմբեր հանէր, որ ներկայումս պաշտպանելու ու կռւելու գլխաւոր միջոցն է, ինչպէս և տէրը։ Եւ ո՞վ է նա, ո՞վ է այդ յանցաւորը.—Տաճկահայաստանից դուրս ապրող հայ ժողովուրդը, որը իւր յոյսը դրել էր դիպլոմատիայի վրայ և խորդ ու անհաւատարիմ աչքով էր նայում իւր յեղափոխական զաւակներին և նրանց արած կոչին արձագանք չէր տալիս։

Եթէ յեղափոխականները ունենային պահանջած միջոցը, մենք դրական ասել կարող ենք ասել, որ այդ սարսափները երբէք չէին կարող այդ ծաւալին հասնել, և այս ոչ թէ խօսքեր են, այլ փաստեր։ Որտեղ որ եղել է հայդուկային խումբ, որտեղ որ Դաշնակցութիւնը կարողացել է զէնք հասցնել, այնտեղի ժողովուրդը կամ ազատ է մնացել կամ թէ չէ շատ չնչին վնաս է կրել։

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը այս տագնապալից վիճակին շարունակում է իւր կռիւը և այդ կռիւն է, կրկնում ենք, մեր ճակատագիրը վճռողը։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, առանց փոշի բարձրացնելու օդի մէջ, իւր հայդուկային խմբերով թշնամուն դիմադրում և հարւածում է։ Չնայած այն աննպաստ պայմաններին, որոնց մէջ գտնւում են հայ ժողովրդի այդ անձնազոհ զաւակները, նրանք ոչ միայն քաջութեամբ կռւում են թշնամու դէմ, այլ մինչև իսկ յաղթութիւններ են տանում իրենց դէմ դուրս եկող մեծաքանակ զօրքի ու համիդիականների դէմ։ և նրանք այսպիսի յաղթութիւններ են տարել՝—Քէմախում, սահմանագլխներում, Զուխուրում, Քեօքրի-Քէօյում, Զեօլ-Զիմանում, Բաբերդում, Մամանդալանայում և Դէլի-Պապայում։

Իսկ Վասպուրականի մեր հայդուկային խմբի հերոսական նոր կռիւը ոչ միայն խրախուսել, ոգևորել ու սիրտ է տուել ժողովրդին, այլև ընդհանուր սարսափ է տարածել քիւրդ ու տաճիկ ժողովրդի վրայ։ Եւ այսօր այդ ժողովուրդը, հային կոտորողը, երգեր է կապում ու երգում հայդուկի, անձնազոհի քաջագործութիւնները։ Հայդուկը ու ահաբեկիչն է հայ ժողովրդի պաշտպանը, դրանք են թշնամու դէմ կռւողը ու նրան սարսափեցնողը։ Բայց այս գործունէութիւնը պիտի հասցնել իւր ցանկալի ծաւալին, նրան պիտի ոյժ ու

զօրութիւն տալ, իսկ դրան հասնելու համար Դաշնակցութիւնը կարիք ունի ժողովրդի աջակցութեան ու օգնութեան, ուստի նա նորից կոչ է անում: Անցեալի դառն փորձերից պիտի օգտուել. բաւական է վերջապէս այդ աստիճանի սառն ու անտարբեր լինել դէպի մեր թշուառ եղբայրներն ու քոյրերը, դէպի հարիւր հազար զոհերը, դէպի աւերակ դարձած հայրենիքը. ամօթ է:

Ներկայ ճգնաժամը պահանջում է ամենալայն ու եռանդուն յեղափոխական շարժումներ, կատաղի կռիւ և պէտք է գործ դնել ամեն միջոց յաղթութիւնը տանելու: Պէտք է մեր գործունէութեան բոլոր ոյժը կենտրոնացնենք ներկայ կռուի վրայ և թշնամուն հարուածներ տալով, մեռցնենք նրան—այդ մահն է մեզ փրկութիւն բերողը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը մինչև իւր վերջին վայրկեանը կը կռուի և յամառութեամբ առաջ կը տանի ներկայ հայդուկային ու տերրորիստական գործողութիւնները:

Եւ այսօր, այս ծանր ու դժուար վայրկեանին մենք դարձեալ հրաւէր ենք կարդում հայ ժողովրդին օգնել, ոյժ տալ Դաշնակցութեան յաջողութեամբ մղելու ներկայ կռիւը՝ յաղթութիւնը տանելու, որից կախուած է տաճկահայի և գուցէ հայութեան ճակատագիրը...

Յուսա

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

— Ն Ա Մ Ա Կ ...

—

Կը ցաւիմ, որ Ուլնիոյ մասին առնուած տեղեկութիւնները քիչ, իսկ տարաձայնութիւնները խիստ շատ են: Կիլիկիոյ զանազան կողմերէ եկող նամակներ և պատահական ճամբորդներ իրարու հակասական շատ մը բաներ կը պատմեն, որոնցմէ շատեր բնականաբար կարևորութենէ զուրկ են:

Ուլնիոյ ներկայ վիճակի մասին կատարեալ ու ճշգրիտ տեղեկութիւններ ստանալու համար սուրհանդակներ հանուած էին: Ասոնցմէ ոմանք դեռ իրենց նպատակակէտին չհասած, ձերբակալուած ու յօշոտուած են, ոմանց վերաբերմամբ ալ դեռ տեղեկութիւն չկայ, իսկ մէկալները սոսկալի նեղութիւններ քաշելէն յետոյ, վերջապէս յաջողած են լուր մը բերել Զէյթունէն, բայց դժբախտաբար բերած լուրերնին շատ հին է և Զէյթունի այժմեան վիճակի մասին տեղեկութիւն մը չեն կրնար տալ: Անկից յետոյ, ուղղակի Զէյթունէն նորագոյն լուր մը չկայ: Թշնամին պաշարումը այն աստիճան յառաջ տարած է, որ գրեթէ ճանճ անգամ չթողուր դրսէն ներս կամ ներսէն դուրս, բայց և այնպէս հարկ կը համարիմ հաղորդել առածս տեղեկութիւնները:

Այս լուրին նայելով, Զէյթունի վիճակը մինչև նոյեմբեր ամսոյ վերջերն շատ գոհացուցիչ է, յաջողութիւնը գրեթէ կատարեալ: Ուլնիոյ և Գոնուզի մէջ գտնուող ժողովրդեան թիւը մինչև 40,000-ի հասեր է, ասոնցմէ 15,000-ի չափ իրրև զինուոր զինեալ, իսկ մնացեալը՝ կին, երեխայ, ծերեր և անկարողներ (հիւանդ և այլն). 4000-ը միայն մարթին ունին, իսկ մնացեալները տեղական պարզ հրացաններ: Զնայելով իրենց այս քիչաւորութեանը և տկար լինելուն, քանիցս մէկերկու հարիւր հոգով իրենց հնգապատիկ կամ տասնապատիկ թւով թշնամեաց հետ զարնուեր և յաջողութիւնը վաստկեր են: „Եթէ մինչև մէկ ամիս, կը յաւելուն զէյթունցիք, օգնութիւն չլինի կամ եւրոպական միջամտութիւն մը տեղի չունենայ, Զէյթունը ալ բնաջինջ կը լինի: Բայց ինչ որ ալ լինի, կըսեն զէյթունցիք, մենք ուխտած ենք մինչև մեր վերջին շունչը, մինչև մեր արեան վերջին կաթիլը կուռել մեր հայրենեաց ազատութեան համար և երբէ՛ք անձնատուր չլինել“: Եւ այդ օրէն մինչև այսօր 40 օրեր անցած են և օգնութիւն կամ միջամտութիւն մը չէ եղած տակաւին. արդեօք ի՞նչ եղած են այդ քաջերը, չգիտենք...

Վերջին պահուն հետևեալ տեղեկութիւնները առի, որ կը փութամ հաղորդել.—

Ուլնիան աղէկ կազմակերպեալ կամ զինեալ է: Կառավարական պաշտօնէէ մ՚առնուած ստոյգ տեղեկութիւններուն նայելով, բանակին հրաման տրուած է յարձակում չգործել ընդդէմ Ուլնիոյ, այլ միայն պաշարման վիճակը շարունակել: Իսկ զինուորի մ՚ալ նամակէն հասկցուած է, թէ թուրք բանակը կը տառապի ցրտէն, անօթութենէն և զգեստի պակասութենէն ու ասոնցմէ առաջ եկող հիւանդութենէն, թէ մինչև հիմա ոչինչ չեն կարողացած ընել և ընելու ալ յոյս չունին:

Ուլնեցիք Մարաշի կոտորածէն խիստ գրգռուած՝ կուզեն 2000 հոգով դիմել հոն, վրէժ լուծելու համար: Անկարելի է, որ ուլնեցիք անձնատուր լինին. թուրքերը իրենց վրայ չյարձակած, իրենք անոնց վրայ յարձակելու դիտաւորութիւն ունին: Ամեն կերպ օգնեցէ՛ք այս կտրիճներուն:

Ուլնիա թէպէտ դեռ անվնաս, սակայն շրջակաները բոլորովին աւերակ դարձան:

Զէյթուն անվներ և անյաղթ կեցեր է: Ատանայի գումանտար Ալիպէյը՝ Գոնուզի և Կուպանի լերանց վրայով Զէյթունի վրայ յարձակել ուզեր է և դիմեր է հոն, բայց անմարդաբնակ գտնելով այդ վայրերը, սկսեր է կրակի տալ գիւղացոց տները, որովհետև բնակիչները առաջուց իրաղեկ լինելով՝ ապաստանած էին Զէյթուն: Թուրք զօրքերը տեսնելով Զէյթունի ապառաժուտ և անել ճամբաները, ցուրտն ու ձմեռը, շատերը սկսած են փախչել: Զօրքեր ու զօրապետներ յուսահատած են: Զէյթունցիք բոլոր կիրճերը ամրացուցած են, անկարելի է ներս մտնել:

Մենք, հայերս այն ժամանակ միայն բժշկին կը դիմենք, երբ հիւանդը գերեզմանի վհին կը մօտենայ...

Ամեն տեղէ օգնութի՛ւն, օգնութի՛ւն կը պոռան ամեն տեսակէտով՝ դրամ, պաշար, ռազմամթերք, մարդ և այլն, և եթէ շուտափոյթ օգնութիւններ չհասնին, Զէյթունն ևս կորած է:

***

Հոս փոքրիկ ուրախարիթ լուր մը.—Ուլնիոյ շրջակաները քանի մը աղի աղբիւրներ գտնուած են, որով աղի պակասութեան համար այլևս շատ չպիտի նեղին, բայց պաշարի պակասութիւնը խիստ զգալի է. այժմեան կերածնին մեծ մասամբ միս և խոտ է։

***

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ)

—

31-ին յունիս. Վիէննա Պոլսից ստացած հեռագիրները հաղորդում են, որ հիւպատոսները հասել են Զէյթուն և գտել են, որ դրութիւնը խիստ լուրջ է։ Ժանտատենդ (typhus) և ընդագարութիւն (scorbut) հիւանդութիւնները օրական միջին թիւով 40 զոհ են տանում։

Տաճկական զօրքի առողջապահական դրութիւնը աւելի պակաս ողբալի է, թէև նա էլ տանջւում է թանջից (dyssenterie)։ Ապստամբների մի փորձ՝ բացանել մի ճամբայ, անյաջողութեան է հանդիպել։ Հիւպատոսները սկսել են իրենց բանակցութիւնները, որ ապըստամբները անձնատուր լինեն։ Առ այժմ բաւականաչափ փախստականներ, որոնց մէջ և չորս քահանայ, ուղարկւած են Մարաշ,

---

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

III

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՀԱՅԴՈՒԿԱՑԻՆ ԽՄԲԻ ԿՌԻՒԸ

(ՊԱՏՄԱԾ ՕՏԱՐՆԵՐԻՑ)

—

Խումբը մուտք գործեց Վասպուրական հոկտ. 23-ին, Պոլսոյ, Տրապիզոնի, Բաբերդի, Բիթլիզի, Կարնոյ աղետալի դէպքերից յետոյ, երբ վանգ էր սպառնում և Վասպուրականին։ Նա բաղկացած էր 60 հոգուց, որոնց մէջ կային և 16 արմենականներ։ Հաղորդակցութիւնը բոլորովին ընդհատւել է. պարսիկներին մինչև իսկ արգելւած է անց ու դարձը։ Երկու շաբաթ սրանից առաջ պէտք էր վերադառնար Վան գնացող կարաւանը, սակայն դեռ ևս նա չկայ՝ տաճիկ կառավարութեան կողմից յարուցած արգելքների պատճառաւ։ Կցկտուր տեղեկութիւններ են գալիս զանազան աղբիւրներից բղխած։ Արդէն շատ տեղ առասպելական լուրեր են տարածւել, իբր երկու հազար զինւած ձիաւոր հայեր արշաւանք են գործել Վասպուրական, կոտորել են ճանապարհին հանդիպող քրդերին և տաճիկ զօրքերին ու յաջողութեամբ հասել են Վան։

Վերջին դէպքերի ժամանակ պարսկաստանցի հայդարանցիք անցել էին Վասպուրական, միացել իրենց ցեղակիցների հետ, թալանել ամբողջ Աբաղայի դաշտը և շրջակայ գաւառները ու ահագին աւարով Պարսկաստան վերադարձել։ Հենց այս հայդարանցի ցեղն է ընդհարում ունեցել մեր խմբի հետ։ Աւարի հետ բերել են խմբին պատկանող երեք նոր ձևի հրացան։

Առաջ ենք բերում երկու անձանց պատմածները։ *)

1, Պարսիկ խանի պատմածը.

„Խումբը անցնում է Սարա կոչւած գիւղաքաղաքի մօտով և կանգ է առնում հանգստանալու։ Քիւրդ հովիւներից մէկը նկատում է հեռից ձորի մէջ գտնւող մարդկանց և յայտնում է մօտակայ քիւրդ ցեղապետներին։ Ցեղապետները ստուգելով եղելութիւնը, շուտով ահագին բազմութեամբ գալիս՝ շրջապատում են խմբի մարդկանց, բայց սրանք շնորհիւ իրենց շատ հեռու արձակող հրացաններին, թոյլ չեն տալիս իրենց մօտենալ և սպանելով 5 հոգի ու վիրաւորելով 10-ից աւելի մարդ՝ պատռում են թշնամու շղթան և աներեւոյթանում։ Հայերը ոչ մի մարդ չեն կորցնում, միայն թողնում են ձորի մէջ մի քանի հրացաններ **)։ Խմբի հետքը շուտով գտնւում է Բօղազքեսան գիւղում։

Այդ բանը յայտնում է մի բօղազքեսանցի հայ։ Երբ քրդերը մօտենում են գիւղին, խմբի մի մասին յաջողւում է անցնել լեռները և ամուր դիրք բռնել, իսկ միւս մասը ուշանում է և մնում գիւղի մէջ։ Քրդերը պաշարում են գիւղի մէջ գտնւածներին։ Երկար ժամանակ տևում է հրացանաձգութիւնը երկու կողմից էլ։ Քրդերից շատերը ընկնում են, իսկ հայերից ոչ ոք։ Բայց մի ժամանակ խմբի կողմից հրացանաձգութիւնն սկսում է հետզհետէ մեղմանալ և յետոյ բոլորովին դադարում է։ Դա նշան է եղել, որ հայերի փամփուշտները հատել են. քրդերը համարձակութիւն են ստանում և անընդհատ հրացան արձակելով, հետզհետէ մօտենում են։ Հայերը չեն պատասխանում։ Քրդերը մինչև իսկ գոչում են անձնատուր լինելու մասին, խոստանալով խնայել այդպիսի կտրիչների կեանքը։ Բայց յանկարծ միանգամից խմբի հրացանները որոտում են և հենց առաջին անգամից 20-ից աւել քրդեր գետին են գլորւում։ Քրդերը բոլորովին շփոթւում են այդ անսպասելի ելքից և սկսում են փախչել դէպի իրեց նախկին դիրքը։ Անընդհատ գնդակներ տեղացնելով սարսափահար քրդերի գլխին, խումբը այլևս ժամանակ չէ տալիս նրանց ուշքի գալու և կոտորելով ճանապարհ է բաց անում, անցնում լեռները ու աներեւոյթանում։ Այդ ժամանակ հայերից ընկնում են 5 հոգի։ Քրդերի կորուստը հարիւրից անցնում է։ Քրդերն իրենց վրէժը լուծում են անզէն գիւղացիներից“։

2, Քրդի պատմածը Զոհրավայում։

„Մենք 2000 հոգի էինք. ամբողջ հայդարանցի ցեղը ոտի էր կանգնել։ Ֆէդէրիներին (անձնազոհերին) մենք պատահեցինք լեռներում։ Նրանք 70 հոգուց աւել էին։ Հալածելով դրանց, մեզ յաջողւեց իջեցնել լեռներից և ձգել բաց դաշտի մէջ։ Այստեղ միայն մենք

---

*) Իսկապէս խումբը իւր հետ ունէր աւելորդ հրացաններ։

**) Դրանցից մէկը բիւրդ է եւ պատկանում է հայդարանցի ցեղին, որի մի փոքր մասը բնակւում է Պարսկաստանում, սրա ցեղապետն է Դաշաբ խանը, իսկ երկրորդը սանմանագլխում գտնւող մի պարսիկ խան է։

սկսեցինք մեր կռիւը։ Մենք կարծում էինք, թէ նրանք այժմ մեր ձեռքումն են, թէ նրանց դրութիւնը յուսահատական է, որովհետև փախչելու ոչ մի հնար չունէին։ Բայց որքան եղաւ մեր զարմանքը, երբ այդ ֆէդայիներից շատերը, մեր գնդակներ արձակելու ժամանակ, ամենայն սառնասրտութեամբ ու հանգստութեամբ հանեցին իրենց թաշկինակները և սկսեցին պարել „Կլոր պարեր“։ Ցեսնելով այդ արհամարհանքը դէպի մեր գնդակները, մենք ակամայ դադարեցրինք մեր հրացանաձգութիւնը և ապշած նայում էինք այդ տարօրինակ մարդկանց խմբի վրայ։ Իրաւունք էլ ունէին, որովհետև մեր գնդակները նրանց չէին հասնում. մինչդեռ երբ մեջանից մէկը գլուխ էր բարձրացնում քարի տակից աւելի մօտենալու նպատակով, նա իսկոյն գնդակահար գլորւում էր։ Կորցնելով այսպիսով 12 մարդ, մենք այլևս չէինք համարձակւում տեղից շարժուել այլ հրացան էինք արձակում քարերի ետևը պատսպարուած։ Այդ ժամանակ նրանցից մէկն ընկաւ, իսկ միւսները հեռացան։ Ուրախանալով մեր յաջողութեան վրայ, մերոնցից շատերն իսկոյն դուրս եկան քարերի տակից, որպէս զի գնան և սպանածի հրացանը յափշտակեն։ Բայց մի քիչ առաջ գնացին թէ չէ, ֆէդայիները նորից վերադարձան և անսպասելի կերպով յարձակում գործեցին մեզ վրայ։ Մերոնցից երեքը տեղն ու տեղը մնացին, իսկ միւսները փախան և դարձեալ քարերի ետևը մտան։ Իսկ „սպանուած“ հայը հանդարտութեամբ վեր կացաւ, առաւ իր հրացանը և միացաւ իր ընկերներին։ Պարզ եղաւ, որ նրանք կեղծել են, ընկածին ամենևին գնդակ չէր դիպել. նրանց նպատակն է եղել միայն մեզ դուրս բերել մեր թագստոցներից“։

* * Բուզան.

Բաբերդի Դաշնակցութեան հայդուկային խումբը նոյնպէս ընդհարում է ունեցել թշնամու հետ, բայց ընդհարման նկարագրութիւնը մեր ձեռքը չէ հասել, թէև ուղարկուած է եղել։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

ԵՐԶՆԿԱ

II

Այս անմոռանալի խժդժութիւններին յետոյ Զէքի շունը քանի մը անգամ կը կանչէ հայ քահանաները, երևելիները և անմոնցմէ զէնք կը պահանջէ։ Ցեղափոխականները ընդդիմացան այս լերբ որոշման։ Զէքին կատղած, „եթէ չը յանձնէք, կըսէ, թնդանօթները շտկած եմ հայոց թաղերուն վրայ (իրաւ ալ շիտկած էր), ժողովուրդն ալ կը յարձակի հայերուն վրայ, այն ատեն ես չեմ կրնար առաջն առնել“։ Այս սպառնալիքէն վերջ անմիջապէս կը բանտարկէ աղաներէն մէկ քանին, միւսներն ալ քահանայից հետ հայ տները կերթան՝ աղաչելով, պաղատելով քանի մը զէնքեր կը հաւաքեն. անոնք որ չունէին, տաճիկներէ սուղ ու կրակ՝ 1 լիրա ատրճանակը 5 լիրայի գնելով՝ 270 կը տոր զէնք կը յանձնեն։ Զէքին ասով ալ գոհ չը մնալով, սկսաւ ինք տունները խուզարկել, յետոյ բռնի շնորհակալութեան գիր ուզեց, ատ ալ տուին։ Ապա յեղափոխականները և դինամիտ պահանջեց։ Հիմա միայն չոր հոգինիս մնաց, անոր ալ կարգը կուգայ։

Քեռիին մայրը երկուս ու կէս ամիս է բանտն է, այժմ հետամուտ են քրոջը, Զարուհին ձեռք ձգել։ Մենք հիմա պարզ կեանքի մթնոլորդէն դուրս կապրինք. ալ համոզուած ենք, թէ այս աշխարհը մեզի համար չէ. շրջմոլիկ հաւերու պէս ման կուգանք անպատակ, ո՞վ գիտէ քանի մը ժամէն, կամ քանի մը օրէն մենք ալ կը մարինք. այն ատեն հրէշը թող իր պոչը ազատ շարժէ՝ իր բերանը հովին բացած։—Դէպքին օրը՝ քանի մը զօրականներ իրենց առջև պարզուած տըմարդկային տեսարանէն խղճահար, կըսեն իրարու՝ „մենք Սասունի կոտորածը տեսանք, հիմա ալ աս տեսանք, եթէ այս ըրածնիս մեզի մնայ, այն ատեն պիտի համարձակիմ ըսելու, թէ Աստուած չիկայ“։ Զինուորներէն շատերը լացած են։

Եթէ պզտիկ մխիթարութիւն մը ունինք, աս է, որ թուրքերը սարսափ կզգան Քեռիին անունէն. հաւատացած են, որ անիկա Ղայասայի կողմը անցեր և 600 մարդով պիտի գայ քաղաքը կոխէ։ Ադոր համար հազարաւոր զօրք լեցուցած են Զարդախլիի և Կերճենիսի կողմերը, որպէս զի դէպի քաղաք արշաւանքը կասեցնեն։ Թուրքերը իրենց պատուհաններու առջև վախերնուն քարեր շարեր են. անոնք մեզմէ կը վախնան, մենք ալ իրենցմէ։

Գալով գիւղացիների վիճակին, մարդկային լեզուով պատմել անկարելի է այդ թշուառներուն կացութիւնը։ Կարծեմ թէ ոչ մէկ գիւղ ողջ մնաց և փախչողներն ալ մատով կը համրուին։ Ոչ երեխայի, ոչ օրիորդի, ոչ ծերի խնայած են. մարդկային գազանութիւնը աշխարհի պատմութեան դուռն ուրեք այնքան խղճմտօրէն կատարած է իր դերը։ Մենք մեր երդիքներու վրայէն հանդիսատես եղանք Բաղէշու հորիզոնին շուրջը բարձրացած դժոխային բոցերուն ու սև մուխերուն, ուր մեր եղբայրները օգնութիւն կաղաղակէին։ Ափսոս, մենք լալ միայն կարող էինք, երբ մեր սրտակիցները կեանքի աղէխարշ պայքարը կը մղէին։ Այն վայրերը, որ երբեմն բազմաթիւ փոքրիկ գիւղեր կը շէնցնէին, այսօր մոխիրի անապատներ դարձած են, զուրկ ո՛ և է կենդանութենէ. քիչ վերջը հիւսիսային քամին ալ պիտի գայ, պիտի ժողվէ տարաբախտ հայ զաւակներուն կեանքի մրուրը և պիտի նետէ զայն քաղաքակիրթ աշխարհի անամօթ ճակտին։

Փախչողները կը պատմեն՝ թէ բոլոր ճամբաները դիակ կտրած են. բարբարոսութիւնը ուր որ հանդիպած է հայու մը՝ անգթաբար խողխողած է տեղն ու տեղը։

Դեռ աւերումները կը շարունակուին։ Հետևեալ գիւղերը և վանքերը բոլորովին կործանած և անհետ եղած են՝ Մթնի 50 տուն, Կարմրի 50 տուն, Փալանդան 20 տուն, Սրբեբան 30 տուն։ Հայրապետի 30 տուն, Բղվան 80 տուն, Կիւլիզա 80 տուն, Մահմուտցիք 100 տուն, Ղարաթուշ 30 տուն, Մեղուցիք 100 տուն, Ծաղգեղ 50 տուն, Ագրակ 80 տուն, Հրոմ-Ագրակ 30 տ., Մոլլագեղ 30 տուն, Երկան 100 տուն, Գէօլնցիկ 45 տուն,

Տանրակ 30 տուն, Ղզլի 20 տուն, Վասկաթիլ 15 տուն, Վերի 50 տուն, Զիւթլիկ 60 տուն, Բթարիճ 75 տուն, Ղարա Տիկին 50 տուն, Ղարաքիլիսէ 60 տուն, Աղջաքեատ 30 տուն, Խնձորիկ 150 տուն։—Վանքեր՝ Զարչարանաց Ս. Լուսաւորիչ, Ս. Գէորգ, Ներսէս Հայրապետ, Ս. Կիրակոս, Ս. Յակոբ, Ս. Կիրակոս, Աւագ վանք, Սեպուհի Լուսաւորիչ, Շողակաթ Ս. Աստուածածին, Միաւոր Ս. Կարապետ, Պօղոս-Պետրոս ու Ս. Նիկողոս։—

Բազան գեղացիք իրենց եկեղեցին ապաստանած էին, զինուորները խաբէութեամբ ներս մտան և 60 հոգի հոն ոչխարի պէս մորթեցին։ Իսկ երբ շրջակայ թուրքերը մէկ եղած Զարչարանաց Ս. Լուսաւորիչ վանքին վրայ կը յարձակին՝ հոչակաւոր Տ. Ղևոնդ արիասիրտ հայրը իր երկու որդիներով և Փափազեան Յովհաննէս կտրիճ երիտասարդի հետ մինչև լոյս առիւծի պէս կը կռուի և իր ձեռքով 10 շուներու լէշը փռելէ վերջ, դժբախտաբար ծունկէն կը զարնուի։ Երեք երիտասարդները իրենց անձնուէր տեր-հօր վէրքը կապելու զբաղած միջոցին խուժանը կը մօտենայ վանքին դռանը և անուշութիւնով երէցկինը կը համոզեն, որ դուռը բանայ. „մենք ձեր թշնամին չենք, կըսեն, մենք երբէք չենք ուզեր վնասել ձեզի և այլն“։ Տխմար երէցկինը կը պատրաստուի բանալ, երբ Փափազեանը պատին վրայէն թռչելով կուզէ արգելել, բայց ուշ էր, աւազակները ներս լեցուած էին, որոնք խսկոյն կսպանեն կտրիճ քահանան, իր մեծ տղան և Փափազեանը միսները կը յաջողին փախչել և մօտակայ գիւղերը ապաստանել։

Հիմա մեր քաղաքը լեցուն է փախստականներով։ Թշուառութիւն թշուառութեան վրայ, ոչ հագնելիք կայ, ոչ ուտելիք։ Հոս մէկ տան մէջ 40-50 հոգի լեցուած՝ ամենուն ալ գոյնը թռած, մեռել կտրած՝ յուսակտուր, կարծես, իրենց օրհասին կսպասեն։ Մարդկային այսքան համախմբումէն մօտալուտ համաճարակէ մ'ալ կը վախնանք։ Եթէ ամիս մը միայն գթութեան ձեռք մը մեզի օգնութեան չը հասնի՝ ապահովապէս սովամահ պիտի ըլլանք։ Այն ատեն ա՛լ մնաք բարով, կեանք և արև... ա՛լ մնաս բարով, ոճիրներու աշխարհ...

ՍԵԲԱՍՏԻԱ ԵՒ ՇՐՋԱԿԱՆԵՐ

II

ՏԷՆՏԻՇ ԵՒ ԶԱԹ

—

Սեբաստիոյ կոտորածին հեղինակ՝ քիւրդերու և չէրքէզներու ահագին խումբը՝ ճամբու վրայ գտնուած բոլոր Հայ գիւղերը իւր աւերիչ այցելութիւնները ընելէ վերջ, հասաւ մինչև մեզի։ Մեր շուրջը եղող բոլոր գիւղերու մէջ ինչ որ կար՝ պղնձեղէն, կապերտ, անկողին, կով, ոչխար՝ բոլորն ալ տարին. բան մը չթողուցին և ամէն ինչ աւերեցին։ Շտեմարանաց մէջ չափ մը ցորեն, գարի չմնաց. ժողովուրդը սովամահ կորսուելու վրայ է։ Նոյեմ. 5-ին ալ յարձակեցան մեր գիւղին վրայ երկու հազարի չափ վայրենի քրդերու և չէրքէզներու խաժամուժ մը, որոնք զանազան վայրերէ հաւաքուած էին բոլորն ալ սպառազէն։ Գիւղը պաշարեցին. „անձնատուր եղէք, ապա թէ ոչ, ամբողջ կը կրակենք“ պոռացին։ Հայ ժողովուրդը, տեսնելով իւր տկարութիւնը, այս դժոխոց վոհմակներուն քով, ծեր, տղայ, այր և կին ամենքս ալ գիւղէն դուրս ելանք և յանձնեցինք խուժանին։ Կանանց ողբն ու աղաղակ, մանկանց ճիչն ու հեծեծանք՝ մարդու սրտերը կտոր. կտոր կընէին։ Վայրենիները սկսան աւարել, կողոպտել. իրենց աւարը 3 օր անընդհատ սայլերով ու ձիերով կրեցին տարին։ Ասով չբաւականանալով՝ բոլոր տուները բրիչներով հիմնայատակ ըրին, կարծելով թէ պահուած դրամ ու գանձ պիտի գտնեն. մինչդեռ գիւղացւոյն հարստութիւնը՝ կով, ոչխար, ցորեն, գարի կը լինի և զանոնք ալ իրենք ժողվեցին տարին։ Հիմա ոչինչ ունինք։ Մուրալով և չարաչար աշխատութիւնով ձեռք բերած օրական ապրուստնիս՝ քարիւղի թիթեղի մէջ կեփենք, և յարդի վրայ կը քնանանք գիշերները։ Վերմակ, անկողին բնաւ չունինք։ Եթէ ձմեռը վրայ չը հասնէր, թերևս այսքան չէինք նեղուեր...

Մեր գիւղը զարնելէ յետոյ արշաւեցին դէպի Զաթ, անկէ ալ գնացին Կէմէրէք։ Զաթի ալ բաւական վնաս հասցուցած են։ Իսկ քաղ կէմէրէկցիք այդ ահագին բազմութեան դիմադրած են երեք օր շարունակ կըռուելով, հետևաբար անոնք վնաս չունին։ Ասկէ զատ՝ շէն գիւղ երբէք չմնաց այս կողմերը, ամենքն ալ աւերակներու կոյտեր դարձած են։ Այժմ գիւղէ գիւղ երթալն անգամ կը վախնանք. դեռ չգիտենք թէ արդեօք ի՞նչ սև օրեր պիտի վայելենք։

***

ՏԷՆԷՓ—ՄԱՏԷՆ

—

Շրջակայքը պատահած կոտորածները, աւարառութիւնները տեղւոյս թուրք խուժանին ագահութիւնը գրգռեցին ընդհանուր աւարէն անմաս չը մնալու համար։ Թէև տեղակալին, դատաւորին և մի քանի վատ պաշտօնէից դրդմամբ որոշած էին կանուխէն յարձակիլ հայ բնակչաց վրայ և թալանել, սակայն մեզ սպառազէն և պատրաստ կարծելով՝ առ այժմ ետ կեցան իրենց չար խորհուրդը գործադրելէ։ Զինք գիտեր, ապագան ի՞նչ կը բերէ։

Քաղաքիս բանտին մէջ, պաշտօնէից ձեռամբ, շատ մը սպանութիւնք կը գործուին, ինչպէս կանխաւ յայտնած էի։ Պոլսէն իւր հայրենիքը աքսորեալ՝ Կեսարիոյ Եվերէկ գիւղէն, հայ երիտասարդ մը՝ տեղւոյս բանտին մէջ երկար օրեր նօթի, ծարաւ, մերկ կը մնայ և գազանաբարոյ պահապաններու՝ անլուր և անպատմելի տանջանաց և պատուոյ բռնաբարութեան տակ մեռած է։ Գաղատիոյ ճամբով Պոլսէն այս կողմերը աքսորեալք՝ Գարալը Թուրք գիւղի բանտին մէջ կը կողոպտուին, կը բռնաբարուին պաշտօնեաներէ, և շատեր ալ կը մեռնին տանջանաց տակ։ (Գարալը՝ Գաղատիոյ և Տէնէք—Մատէնի միջև թրքաբնակ գիւղ մըն է, ուր գայմագամ կը նստի)։

Աւանիս շուրջը գիւղերու մէջ առևտուրով զբաղող Հայ և յոյն մանրավաճառք՝ գիւղացիներէն կողոպտուած,

ծեծուած, վիրաւորուած են։ Կը բողոքեն, բայց կառավարութիւնը կարևորութիւն անգամ չտար։ Նէվլէհիրցի մի յոյն՝ կսպանուի Գըրշէհրի Սալճըլ գիւղին մէջ, նոյն գեղի Թուրքերէն։ Նորա երկու ընկերները ևս կը մորթեն ուրիշ գիւղի մէջ։ Եօզղատցի Զօլագեան Սենեքերիմ անուն, 25 տարեան երիտասարդ մը՝ Գանթարճը Կարապետ անուն ընկերոջը հետ՝ Մէճիտիէ նահանգին մի գիւղին մէջ կը կողոպտուին. իրենց քով գտնուած 600 դահեկան դրամը առնելէ վերջ, Սենեքերիմը կը մորթեն անգթօրէն, իսկ Կարապետը վիրաւոր կը ձգեն։ Աւելորդ է ըսել, թէ դիմումներ միշտ կը լլան տեղական կառավարութեան, բայց անօգուտ, ականջները խըլացած են։

ՄԱՐԶԻԱՆ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԸ

1895 թ. Նոյեմ. 3-ին տեղւոյս Թուրք խուժանը, ուրբաթի աղօթքը կատարածնուն պէս՝ իսկոյն յարձակեցան շուկային վրայ։ Հայերէն ոմանք արդէն նախազգացած լինելով այս չարադէպ վտանգը՝ խանութին չէին բացած այն օր. իսկ ոմանք միամիտք՝ կարևորութիւն չտալով և կամ նոյն իսկ կառավարութեան սուտ ապահովիչ քաջալերութենէն խաբեալով՝ խանութները բացած, էին։ Զմոռնանք ըսելու, որ այս յարձակումը պատերազմահրաւէր փողով սկսաւ, այն է կառավարական մասնաւոր հրամանով։ Բաց խանութները կողոպտեցին ամբողջապէս և նոցա տէրերը սրէ անցուցին անողորմաբար։ Նոյնպէս հրապարակի վրայ գտնուող բոլոր հայերը ջարդեցին, ժամերով աշխատեցան գոց խանութներն և վաճառատուները բանալ՝ դռները կոտրելով. ուր որ մտան՝ ասեղ մը իսկ չէ ձգեցին։ Տուներու վրայ արշաւելու չհամարձակեցան, ուստի իրենց տուներուն մէջ ապաստանած և պատրաստ եղողները ազատ մնացին այս կոտորածէն։ Նիւթական վնասիս 100,000 ոսկիէ աւելի է. մեծ վաճառատանց տոմարները ևս ջնջեցին ու այրեցին։ Սոսկ մի անհատ ութ հազար ոսկւոյ չափ վնաս ունի։

Յոյն խանութներու չըվնասեցին։ Թէև հայոց թաղերու վրայ չըհամարձակեցան արշաւել, բայց 12 ընտանիք՝ որոց տուները քաղաքին եզրը և թրքաց մօտ էին, զոհ գացին ամբողջապէս։ Զոհերու թիւը երկու հարիւրէ աւելի է։ Երեք հարիւրի չափ ալկորսուածներ ունինք, զորս չգիտենք, թէ ի՞նչ եղան. անյայտ են։ Ուրիշ տեղերու բաղդատմամբ թէև բազմաթիւ չէին քաղաքիս սպանուածները, սակայն ժողովուրդը յետին աղքատութեան մատնուեցաւ։ Զմեռը վրայ հասաւ՝ հաց, զգե՛ստ կուզեն, քաղցէն ու ցրտէն չըմեռնելու համար։

Մարզւանի շրջակայ գիւղերը ևս կողոպտուած են։ Հաճի գիւղի խանութները, վաճառատունք ևայլն, բոլորը մաքրուեցան։ Անձի կորուստ չեղաւ։ Կավզայի մէջ 11 տուն ամբողջ սրէ անցուցին և ինչքերնին յափըշտակեցին։

* * *

ԱՄԱՍԻԱ

Առաջները, Ամասիոյ մէջ ևս շարժում տեղի ունենալով՝ հայոց խանութներէն մաս մը յափշտակուած և 17-20-ի չափ անձանց կորուստ եղած էր, լսեցինք թէ՝ այս օրերուս երկրորդ և ահագին իրարանցում մը եղած է. սակայն դեռ որոշ և ստոյգ տեղեկութիւնք չըստացանք։

* * *

Ասոնք զանազան վայրերէ հասած ընդարձակ տեղեկագրերու համառօտ բովանդակութիւնն են, զորս կը ներկայացնենք։ Ասոնք սուլթանի բարենորոգութիւններն են՝ զորս անյապաղ կատարել սկսաւ ծրագրին ընդունած և ստորագրուած օրէն ու ժամէն։ Ա՜հ, հուր լափեց Հայաստանը, խողխողուեցաւ հայուն հայրենիքը, արեան ծովեր ձևացան և յորդեցան ամենուրեք. թող տեսնէ Եւրոպան, հայու իսպառ բնաջինջ ըլլալը բըռնաւորութեան անողորմ սուրին տակ, այն դարուն մէջ, որ լուսաւոր տիտղոսը կը կրէ։ Արդեօք դեռ կը կասկածի՞ն եւրոպացի տէրութիւնք, թէ հրէշ սուլթանը անմեղ է, անտեղեակ է։ Կիւրինի վրայ յարձակող աւարառուք արձակ, համարձակ պոռացեր են թէ՝ „մեր թագաւորը հրամայեց մեզի սրէ անցնել բոլոր կեավուրները և յափշտակել անոնց բոլոր ինչքը“։ Մարզւանի մէջ մասնաւոր զինուորական մարտափողով սկսած և փողի ձայնով դադրած է աւարառութիւնը և կոտորածը, ինչպէս Եօզղատի մէջ անցեալ տարի մարտահրաւէր փողով սկսաւ կոտորածը և նոյնով դադրեցաւ։ Կոտորած ընելէ յետոյ՝ օրերով ալ անընդհատ սայլերով ու ջորիներով աւար կրեցին ու տարին։

Ո՞վ դրդեց այդ տխմար վայրենիները, խմբովին գործելու, ո՞վ ժամադրութիւն ըրաւ այդ խառն ի խուռն ցեղերը միևնոյն օրը և միևնոյն ժամը ի մի հաւաքելու, որոնք մէկզմէկու լեզուն անգամ չէն դիտեր, իրարու խօսած չէն հասկնար, զիրար չէն ճանչնար այդ քիւրդ, թուրք, էէրքէզ հրոսակներ։ Մենք լաւ և ստուգապէս գիտենք, թէ կառավարութեան ծրագրով եղան ասոնք։ Մենք արդէն կը ճանաչէինք սուլթանը, իւր անթիւ արիւնարբու պաշտօնեաներովը, մենք զինքը ճանչցած էինք մեր կրած հարստահարութիւններով, մեր բազմաչարչար ժողովրդեան նահատակութիւններով, մեր հարսներու, քոյրերու վրայ ի գործ դրած անխիղճ բռնաբարութիւններէն։

Եւրոպան արձան կտրեցաւ մեր արդար բողոքներուն, մեր հառաչանքներուն դիմաց, անշուշտ օր մը պիտի գայ, որ անիկա մեր գերեզմանաց, մեր աւերակներու և մեր աճիւններուն վրայ կանգնել իր բարենորոգումներու կոթողը։

Ա՛լ մենք վարժուեցանք մահուան, սիրայօժար կը մեռնինք։ Թող Եւրոպան իր քար սրտովը հանգիստ մրափէ վագրի մը անխղճութիւնով։

Մենք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, միայն պատառ մը հաց, լաթի կտոր մը և գլուխ դնելու տեղ մը տուէք թշուառ հայուն, որպէս զի քաղցէն և ցրտէն չըկորնչի։

Հա՜ց, զգե՛ստ, տո՛ւն...

ՍԱՄՍՈՆԻՑ

—

Հայութիւնը ՃգնաԺամի մէջ է։ Կարծես Պոլսոյ խաղաղ ցոյցից յետոյ, որը այնքան ցաւալի վերջաւորութիւն ունեցաւ, Տրապիզոնի, Կարինի, Երզնկայի, Խնուսի, Բաբերդի և այլն տեղերու մէջ պատահած սոսկալի խժդժութիւններ բաւական չէին տառապեալ հայուն սիրտը ի խոր խոցելու։ Կարծես դրանք բաւական չէին քաղաքակիրթ Եւրոպայի համար իբրև ամօթ ու նախատինք, նոյեմբերի 16-ին (ն. տ.) միահամուռ հասան Ամասիայէ, Թօքաթէ, Սվազէ, Մալաթիայէ, Մարզւանէ և այլ տեղերէ կոտորածի տեղեկութիւններ, որոնց ըստուգութիւնը թէև մասնաւորներու եկած հեռագիրներէն հաստատուեցաւ, բայց դրանց հետևանքի մասին՝ ճամբաներու անապահովութիւնից ոչ մի ճամբորդ չգալով, և սովորական փոստայի տասն օր ուշանալու պատճառաւ, ոչ մի մանրամասնութիւն քաղել անկարելի եղաւ։ Իսկ եթէ եղան թրքական աղբիւրներէ տեղեկութիւններ, նրանց ալ ի հարկէ ներելի չէր հաւատ ընծայել, ըստ որում նրանց բերնին մէջ իրողութիւնները չափազանց կը պզտիկնան ու կը խեղաթիւրուին։

Ահա երկու օր առաջ հասած նամակով ինչպէս են նկարագրում Ամասիոյ դէպքը, որը տեղի է ունեցել ամսոյս 15-ին (ն. տ.), ուրբաթ օր։

„Անցեալ ուրբաթ օրէն ի վեր ամբողջ հայերս տանը մէջ ենք։ Դէպքին օրը, Սուլթան Պէյազիտի շրջակայքն սկսեալ, ամբողջ շուկան ակնթարթի մը մէջ գոցուեցաւ, յանկարծ պայթող փոթորիկի մը սարսափելի ուժգնութեամբ, գոռում գոչումով ու իրարանցումով։ Խանութներն առանց գոցելու փախչողները բազմաթիւ էին։ Կէս օրւայ ուրբաթի աղօթքին յաջորդող այս խառնակութիւնը՝ հայերու հրապարակի վրայէն պակսելովը, հանդարտեցաւ պահ մը, որ ատեն Թաշխանը, եկեղեցիները ու ասոր անոր տունը ապաստանողներ միջոց ունեցան իրենց տունները դիմելու։ Այս ատեն, ժամը 9-10, արդէն փողոցները ամբողջ լեցուած էին գիւղացիներու քաղքցիներով բազմութեամբ, որք կատարելապէս զինուած էին բիրերով, ռէվոլներով ու դանակներով։ Փողոցներու մէջ յետամնաց հաներէն՝ մօտ 80-100 անձի կորուստը՝ այս ժամէն վերջը պատահած է. թէև ստոյգ թիւը չգիտցուիր։ Բացի Պէտէնտէնէն ու Թաշխանէն՝ ամբողջ հրապարակը թալանուած է թուրք խուժանին կողմէ։ Նիւթականի այս փչացումը, մեզ, ապրողներուս համար թէև կեանքի պահպանութեան մտածումով մեղմացած, այնու հանդերձ սոսկալի է։ Խեղճութիւնը վերջին ծայրն է հասած նոյն իսկ անոնց մէջ՝ որոնք դեռ երեկ հարուստ էին ու բարեկեցիկ։ Օգնութի՛ւն որմէ սպասել։ Դրացիդ, բարեկամդ, ազգականդ, նոյն իսկ ազգդ համբէն վիճակակից է քեզի։ Խանութներու մէջ 10 փարայի ապրանք թողուած չէ։ Նամակներ, թղթեր, տոմարներ ամբողջ փչացած են կամ կորսուած։ Քաղաքապետ Պէքքեր փաշան ազգու ջանքեր կընէ գողոնները երևան հանելու, և այդ մտօք գիւղերն ալ ոստիկաններ ղրկած է։ Հաստատ խոստում ըրած է հայուն, թէ բոլոր կորուստները սանթիմով պիտի գտնուին կամ փոխարինուին։

Բոլորովին խեղճերուն սկսած է ալիւր բաշխուել, որոնց՝ փաշան իր կողմէ նուիրած է 60 պարկ“։

Ահա այն աղէխարշ տեղեկութիւնը, որ անտարակոյս տակաւին շատ թերի է, քանի որ տեղեկատուն տանը մէջ փակուած ըլլալով մանրամասնութենէն շատ բանի անտեղեակ է։ Ամասիան բաղդատելով Սվազի, Կիւրինի և այլ տեղերու, տակաւին կարող է բարեբաղդ համարել իրան, քանի որ թուրք խուժանի բարբարոսութիւնը խնայել է դէթ նրա ընտանեկան յարկը, և այդ ոչ թէ իր խղճահարութիւնից, որովհետև խիղճը գոյութիւն չունի այդ գազանացած ժողովրդի մէջ, այլ այդ պարագայում գտնելիք զօրաւոր ընդդիմութեան երկիւղից։ Ինչ որ ամենավատ ստորութիւն է թուում ինձ, դա այն խոստումն է, որ կընէ քաղաքապետ փաշան, գտնելու հայերին ամբողջ ապրանքը, այն ապրանքը, զոր ինքը նոյն իսկ՝ իր լէշակեր արիւնարբու վեհապետի հրամանով, թալանել տուեց իրանց պետի արժանի ժողովրդին։ Հայը լաւ գիտէ, թէ մի ասեղ չի վերադառնալ իր յափշտակուած ապրանքներից։ Իսկ սոսկալի անտարբերութիւն չէ՞, խեղճ ժողովրդէն իրան քրտինքի արդար վաստակը յափշտակելուց յետոյ, նրան ողորմութիւն տալու ելլելը։ Ո՛չ, հայը կրնայ քաղցած մեռնել, քան այդ հրէշների ողորմութիւնով ապրել։ Նահանգապետ Պէքքերը լաւագոյն կանէր, եթէ այդ ալիւրը ղրկէր իրանց մէտրէսէները, գազան մօլլաներին, հետևելով իրա սուլթանի օրինակին։

Մարզւան, Թօքաթ, Սվազ, Մալաթիա, ի՞նչ թըւեմ, ամբողջ հայաբնակ քաղաքներ և նոյն իսկ աւաններ, հայերը նիւթապէս բոլորովին փչացած կարելի է համարել։ Հասնող փոստան ուրիշ տեղերու անձի կորուստի որքանութեան մասին տեղեկութիւն չբերաւ, նամակներ հին ըլլալուն պատճառաւ։ Կը հաւաստեն, որ Մարզւան մեռածներու թիւը կը հաշուեն 100-150 հոգի։ Ճամբաների վրայ ոչ մի ապահովութիւն չկայ։ Ճամբուն երկայնքը գտնուող բոլոր հայերու ապրանքները նոյնպէս թալնուած են։ Ճամբու վրայ սպանուած հայեր շատ են. երթևեկ բոլորովին դադրած է։ Այս ամեն հետզհետէ հասնող տխուր տեղեկութիւններ՝ տեղւոյս հայ ժողովուրդը անհուն սարսափով լցուցին և հակառակ կառավարութեան ձեռք առած զգուշական խիստ միջոցներուն, այստեղ ալ յարձակում մը կրելու երկիւղը պաշարած է ամեն ոք։

Այս ամեն բարբարոսութիւնների հանդէպ՝ Եւրոպական դիպլոմատիան թող շարունակէ իր անվերջանալի բանակցութիւնը հարեմական խելայեղեղ մթնոլորդով արբեցած այդ պոռնիկ կառավարութեան հետ։ Նա միշտ կարող է իր նենգամիտ հնարամտութեամբ տակաւին երկար խաբել նրանց և անվրդով յառաջ տանել իր գործը՝—հայութիւնը բնաջինջ ընելու գործը։ Այն Եւրոպան, որ բնաւ չէ ներում գողի մը իր յանցանքը, որքան անարժէք ալ ըլլի նրա գողացածը, ի՞նչպէս անտարբեր աչք նայում է այս պաշտօնական աւազակութեան վրայ, այնքան ընդարձակ սահմաններու մէջ կատարուած. այն Եւրոպան, որ մի մարդասպանին պատժում է մահով, ի՞նչպէս, չգիտեմ համաձայնում է բարեկամական կապեր ունենալ այնպիսի մի ճիւաղի հետ, որը աւեր և կոտորած է սփռում իւր

շուրջը, որը ոչ միայն հազարաւոր անմեղ հայերու արիւն խմած է ու կը խմէ, այլև չենայեր իրեններէն ալ ամեն անոնց, որոնք իր արդէն խարխուլ գոյութեանը վնասող ձեռնարկներ կնեն։ Հայը մահէն չի վախնար։ Նա կը մեռնի լաւագոյն համարելով մահը ստրկութիւնից, նա կը մեռնի իւր հայրենիքի ազատութեան համար։ բայց նրա անմեղ արեան կարմիր բիծը չի ջնջիր յաւէտ նրանց ճակատէն, որք կարող էին նրան օգնել ու չօգնեցին։ Հայը կը մեռնի մինչև իր յետին շունչը գոչելով՝ Ազատութի՛ւն կամ մա՛հ։

Ց. Գ. Մի քանի օրէ ի վեր անհամբերութեամբ ըսպասւած ռուսական զօրահաւորը այս գիշեր հասաւ, և խարսխեց առանց բարևելու Օսմ. բերդը։ Տակաւին չը-գիտցուիր, թէ որչափ պիտի մնայ և ի՞նչ ուղղութեան պիտի հետևի նա. սա միայն ճշմարիտ է, որ տիրող սարսափը մասամբ մեղմացաւ։

Ամասիայից նոր հասնող մի թուրք ջորեպան հաւաստում է, որ հոն մեռածների թիւը 150-ի մօտ է. շուկան, կաւելցնէ նա, աւերակ մ'է իւր ամբողջութեամբ. ոչ մարդ և ոչ գործ, մեռելութիւն տիրում է ամեն կողմ։ Նա լսել է նաև, որ Մարզւանում մեռածների թիւը վերև հաղորդածից շատ աւելի մեծ է։

ՆԻՒՐԱՏՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Ցեղասիրական Դաշնակցութեան կենտրոնական սնդուկի մէջ ստացուեցան.

Պ-ի Մ... քաղաքից Ժիրայրի ձեռքով պանդուխտներից 1 Մ. Ա. 30 ղրան, Ց. Տ. Վ. 10 ղր., Ց. Կ. Խ. 50 ղր., Մի ոք 20 ղր., Ոմն 30 ղր., Անատօլ 20 ղր., Ղարագաղցի ոմն 40 ղր., Ոմն 30 ղր., Բ. Ս. 20 ղր., Ղ. Ս. 30 ղր., Ա. Ղ. 50 ղր., Մ. 50 ղր., Ա. Ց. 10 ղր., Ոմն 10 ղր., Ց. Հ. Ց. 10 ղր., Ց. Գ. 10 ղր., Օ. Դ. 20 ղր., Մ. Տ. Ա. 10 ղր., Օ. ոմն սալմասցի 10 ղր., Ուժից 20 ղր., Անհատ 10 ղր., Ոմն խոյեցի 10 ղր., Գ. 20 ղր., Մի ոմն 10 ղր., Ց. Ա. 10 ղր., Ց. Վ. 10 ղր., Սև լեռնցի 10 ղր., Ա. Ա. 10 ղր., Ոմն 10 ղր., Բ. 10 ղր., Մ. Բ. 10 ղր., Հ. Տ. Գ. 10 ղր., Մի ոմն 10 ղր., Ա. Մ. Ա. 20 ղր., Ա. Ց. 10 ղր., Մ. Դ. 20 ղր., Տ. Բ. 10 ղր., Ղ. Բ. 10 ղր., Մուրացան Մ. Պ. 10 ղր., Ց. Մ. 20 ղր. Մ. Ց. 5 ղր., Ղարագաղցի 20 ղր., Նեփեշտցի 10 ղր., Ոմն Ց. 10 ղր., Ջ. Ց. Սլմնտցի 30 ղր., Ս. Բ. 5 ղր., Պ. Մ. Մ. 10 ղր., Մ. Ա. 10 ղր., Ս. Ց. 5 ղր., Կրկին 12 նոմերի Մ.-ից 10 ղր.։ Գումար 835 ղր.։

Նոյն ք.-ի բնակիչներից Ժիրայրի աշխատութեամբ. Ս. Գ.-եանի, Լ. Մ.-եանի, Ա. Վ.-եանի և Ա. Մ.-եանի ձեռքով առանձին, որ է 51 №-ից Ա. Վ. 40 ղր., Ա. Մ. 50 ղր., Լ. Մ. 60 ղր., Ա. և Համբարձում 20 ղր., Ս. Գ. 50 ղր., Ա. Մամիկոն 50 ղր., Պ. Ե. 50 ղր., Ս. Գ. 40 ղր., Կ. Վ. 30 ղր., Կ. և Մովսէս Ա. 30 ղր., Կ. Ղ. 10 ղր., Ս-ա. 10 ղր., Մ. Բ. 20 ղր., Գ. Բ. 10 ղր., Ե. Մ. 60 ղր., Մ. Բ. 80 ղր., Բ. Ց. 50 ղր., Մ. Ս. 10 ղր., Անտոն Մ. 20 ղր., Պ. Շ. 10 ղր., Ս. Տ. Փ. 20 ղր., Տ. Ա. Ք. 15 ղր.. Հ. Տ. Փ. 30 ղր., Ե. ամի 5 ղր., Ս. Ռ. 60 ղր., Ց. Տ. Վ. 10 ղր., Մ. Շ. 30 ղր., Ա. Ս., 30 ղ., Մ. և Թ. որդիք նոյնի 10 ղ., Ա. Վ. 30 ղ., Խ. Մ. 20 ղ., Ց. Ջ. 20 ղ., Բ. Ա. 50 ղ., Ց. Բ. 60 ղ., Ռ. Վ. 10 ղ., Բ. Օ. 20 ղ., Մ. Սահակեանց 30 ղ., Աբգարից 10 ղ., Մ.-ից 5 ղ.։

Գումարն է ք. բնակիչներից հաւաքած դրամի 1165 ղրան։

Սալմաստ. Ա. Հ. 100 ղրան, Եղ. Ա.Բ. Ա. 350 ղ., Բ. Բ. 100 ղ., Կ. Մանուէլեան 150 ղ.։

Արշակաւան քաղաքի կեդրոնական սնդուկին մէջ ստացած են.

Վարդանոյշ 40 դահեկան, Ուժանակ 90 դհ., Ոմն 15 դհ., Նիզակ և Կացին խ. 80 դհ., Արտաւազդեան խ. 300 դհ., Մ. Միքայէլեան 10 դհ., Կ. 5 դհ., Գինարբի խ. 50 դհ., Ցուսացող հայուհիք 54 դհ.։

Հայկաւանէն.—Խպլիկ և Ալք վան Զէյթունի 2 ուկէս մէճ., Երկաթ քաղաքի Երկաթ խ. Թոյնէն 1 օսմ ոսկի, Գոնեաք 1 օսմ. ոսկի, Զանազաններէ 4 օսմ. ոսկի։

Քուշանաց քաղաքէն.—Պարթևք 120 դհ., Անիսք 125 դհ., Ֆ. Բ. Ց. 300 դհ., Զ. խ. 1080 դհ., Թ. 20 դհ., Մ. Կ. Խ. տիկին 500 դհ., տղայոցմէ 41 դհ., Աւետ. Պեր 200 դհ, Ս. սիրտ 10 դհ., Գ. Կ. 20 դհ.։

Բ. քաղաքի հայ ուսանողներից 221 ֆր. 66 սանտ.,

Նորից խնդրում ենք հասցէները գրել խիստ որոշ ու պարզ։ Այլապէս մենք ստիպւած ենք անբաւարար ու անպատասխան թողնել շատերին, որովհետև հասցէները անընթեռնելի են։

* * *

Խնդրում ենք ծրարի վրայ գրել մեր հասցէներից միայն մէկն ու մէկը, որովհետև այն նամակները, որոնց վրայ գրւած են միանգամից երկու հասցէներն էլ՝ մեր ձեռքը չեն հասնում, ինչպէս պատահել է նոյն իսկ մի քանի ապահովացրած նամակների հետ։

* * *

Թիւրիմացութիւնների տեղիք չտալու համար, ստիպւած ենք մեր նոր հասցէն դարձնել „ԱՐՄԷՆ-ԳԱՍՊԱՐ“ որի վրայ հրաւիրում ենք առանձին ուշադրութիւն։

Խմբագրութեան հետ թղթակցողներից խնդրւում է բացառապէս դիմել այդ նոր հասցէով։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նիւթատուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole; 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան աշատ տպարան։

№ 5 10 ՓԵՏՐՎԱՐ 1896

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԳԱՐԱՆ
A.R.F. BURO LIBRARY

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՄԲՈԽԻ ԴԵՐԸ

I

Ամեն անգամ, երբ Հայ յեղափոխական շարժումը սաստկանում էր և ստիպում Եւրոպական պետութիւններին աւելի խստիւ պահանջել սուլթանից Ցածգեհայաստանի մէջ տիրող անկարգ իրերի փոփոխումը, սուլթանը ճարպիկ քաղաքով օգտւելով շահերի այն հակառակութիւնից, որ կարող է առաջ գալ Եւրոպայում Հայկական խնդրի այս կամ այն եղանակով լուծւելուց, ամեն անգամ զանազան առարկութիւններ էր անում կամ „սեփական միջոցներն“ առաջարկում։ Եւրոպական պետութիւնները շատ լաւ էին հասկանում այն խաղը, որ իրենց հետ խաղում է սուլթանը. հասկանում էին, բայց և այնպէս վախենալով հետևեալ քայլն անելուց, որ կարող էր բարդութիւններ առաջ բերել և վնասել անմիջապէս իրենց շահերին կամ զօրեղացնել այս կամ այն հակառակորդին, իրենց տալիս էին լուրջ կերպարանք, սուլթանի ակնյայտնի ծաղրածութիւններն ստիպած ընդունում էին իբր խելահաս, նպատակայարմար միջոցներ և բարձրաձայն աւետում աշխարհին, որ այսուհետև ամեն ինչ լաւ կընթանայ։

Բայց ով որ էլ խաբւէր, չէր կարող խաբւել Հայ ժողովուրդը, որի գլխին էին կատարւում այդ բոլոր „օյինբազութիւնները“, որը դարերի ընթացքում լաւ էր ուսումնասիրել իր վեհափառ պետի գործ դրած „Հայրախնամ բարեսորոգումները“ և որը վճռել էր միանգամ ընդ միշտ խմել մինչև վերջը յեղափոխութեան դառը բաժակը։

Սուլթանի ամենալուրջ առարկութիւններից մէկն էլ հետևեալն էր. „Եթէ ծրագիրն ընդունւի, եթէ քրիստոնեայ ազգաբնակութեան տրւի առանձնաշնորհումներ, այն ժամանակ մահմեդական մոլեռանդ ամբոխը կը դրգռւի, կը յարձակւի քրիստոնեաների վրայ և բոլորին կը կոտորի. իսկ ես իմ ուժերով անկարող կը լինեմ դրա առաջն առնել“։ Այս իւր առարկութեամբ նա իսկապէս երկիւղ էր ազդում շատ շատերի վրայ և շատ միամիտներ անտեղեակ էին, որ ինքը սուլթանն է ամեն միջոց գործ դնում՝ գրգռելու մահմեդական տարրը, որպէս զի պատրաստ գէնք ունենայ ձեռքին՝ իր դժոխային ծրագիրն իրագործելու համար, երբ այդ հարկաւոր կը համարի։

Ներկայ յօդուածով մենք նպատակ չունինք բնաւ ցոյց տալ սուլթանի և եւրոպական դիպլոմատիայի կեղծութիւնն ու փարիսեցիութիւնը. դա ինքն ըստ ինքեան պարզ է և մեկնաբանութիւնների կարօտ չէ։ Մեր նպատակն է միայն ցոյց տալ մեր ունեցած փաստերի հիման վրայ կառավարութեան և մահմեդական ամբոխի դերերը, իւրաքանչիւրի ներգործութիւնը, մասնակցութեան աստիճանը վերջին եղեռնական գործերում։

Թէ ներկայ ընդհանուր կոտորածի հրամանը բղխում էր ուղղակի սուլթանի պալատից, թէ դրանով սուլթանը և իր խորագէտ խորհրդատուները նպատակ ունէին խպառ լռեցնել բողոքող Հայ ժողովրդի ձայները, դրա մէջ դժւար թէ այժմ մէկը կասկածի։ Թող դեռ կառավարութիւնը բանտերը լցնի հարիւրաւոր պատահական անձնաւորութիւններով, միայն թէ ցոյց տւած լինի, թէ „ապստամբները“ ձերբակալւած են, թող լրբաբար զուր ամբաստանութիւններ անի սրա, նրա վրայ, որոց գոյութիւնը զանազան պատճառներով անհաճոյ է իրեն, թող շարունակի գործ դնել նրանց վրայ իր բոլոր դժոխային տանջանքները՝ զանազան խոստովանութիւններ կորզելու նպատակաւ... Թող նա իւր գիշատիչ էանկերով, որոնց վրայ դեռ չի չորացել հարիւր հազար անմեղների արիւնը, պատառի Հայ ժողովրդի արիւնաքամ կուրծքը, նրա վէրքերը քրքրելով. Թող փնտրի ամենայն եռանդով „կոտորածի հեղինակներին“, նա ոչ ոքի խաբել չի կարող. ամենքի համար պարզ է, որ դա նոյնպէս առիթ է Հայ ժողովրդի վրայ ահ ու սարսափը միշտ վառ պահելու, նրան խպառ վհատեցնելու և յեղափոխական շարժման միանգամից վերջ տալու։

Միաձիտ Հայ հասարակութիւնը կարող էր խաբւել կոտորածից առաջ նա դժւարութեամբ էր իրեն թոյլ տալիս մտածելու, որ կառավարութիւնը ընդունակ է մի այդպիսի տմարդի գործողութեան, այդ տեսակ գազանական և միևնոյն ժամանակ յիմար ընթացք, որ

մարդկային պատմութեան մէջ բացառիկ դէպքերի շարքը կը դասուի, հայ ժողովուրդը չէր սպասում մինչև իսկ սուլթանի կառավարութեան նման ապուշ և վայրենի կառավարութիւնից։

Սուլթանի բաղձանքը կատարուեց. երկիրը ծածկուեց բիւրաւոր դիակներով, բազմաթիւ քաղաքներ և գիւղեր ամայի դարձան։

Ի՞նչ դեր կատարեց ինքը ամբոխը, որով տարիների ընթացքում սարսափեցնում էին մեզ. ի՞նչ կարող էր նա անել առանց կանոնաւոր զօրքի ուժեղ մասնակցութեան։

—Ոչի՛նչ, համարձակ կարող ենք ասել մենք, գոնէ այն տեղերի վերաբերմամբ, որոնք մեզ քաջ յայտնի են, բայց թող խօսեն փաստերը։

Կարնոյ մէջ տաճիկ ազգաբնակութիւնը անհամեմատ շատ է հայերից։ Բացի այդ, դրսից հաւաքուել էին ամեն տեսակ գիշատիչներ՝ լազեր, չերքէզներ, թարաքամաներ, քրդեր... թւով մօտ 20,000։ Այդ ահագին բազմութիւնը խռնուած էր Կարնոյ փողոցներում, անցնելու տեղ չկար։ Բայց և այնպէս՝ հարկաւոր էր 3000-ից աւելի լաւ զինուած զինուորներ, որ համարձակուէին հայերի վրայ յարձակում գործել։ Կոտորածի ժամանակ բաւական էր մի ատրճանակի ձայն՝ այդ „ահռելի“ ամբոխը ցիրուցան անելու համար։ Հայերի կողմից ամենաթեթև ընդդիմադրութիւնը ընդհատում էր մահմեդական ամբոխի „յաղթական“ ընթացքը։ Այդ ժամանակ օգնութեան էին հասնում Մարտինի հրացաններով զինուած զինուորները և ամբոխի համար ճանապարհ բաց անում։ Ի՞նչ կարելի է անել ատրճանակով Մարտինների դէմ։ Զինուորները բռնում էին շուկաների երկու կողմն էլ, հեռից գնդակահար անում և յետոյ դիակների վրայից ատրճանակները ժողովում։ Մի ընդդիմադրող հայի վրայ միանգամից 20-25 հրացաններ էին ուղղւում։ Խանութների, տների ամուր կողպէքները փշուր փշուր էին լինում նրանց գնդակներից։ Դրանից յետոյ միայն ամբոխը համարձակւում էր առաջ ընթանալ։ Նա այդ ժամանակ առիւծ էր դառնում թալանում էր, աւերում, բռնաբարում, սրի էր անցկացնում դեռ կենդանի մնացածներին, յօշոտում, պլանդակում էր արդէն զինուորների գնդակներով ծակծկուած դիակները, զարձանում էր նրանց կաշին քերթելով, վերաւորուածներին այրելով և այլն։ Կոտորածի երկրորդ օրուանից սկսած գերեզմանատուն էին բերել 315 դիակ։ Նրանք երկար ժամանակ շարուած մնացին ծառերի տակ։ Ամեն մէկը կարող էր գալ և իր աչքով տեսնել։ Դիակների վրայ ոչ մի հագուստ չէր մնացել, շատերը բոլորովին մերկ էին. դիակների միայն մի մասի վրայ դեռ կնոջին կամ շապիկ կամ ոտաշոր. դա մի անբացատրելի բարեխղճութիւն էր թալանողների կողմից... Այնպէս որ ոչ մի դժուարութիւն չկար ղնել դիակները *)։ Շատերը զննեցին նաև իրենք՝ հիւպատոսները. չկար մի դիակ, որ իր վրայ չկրէր գոնէ մի քանի հրացանի կամ զինուորական ատրճանակի գնդակների վէրքեր։ Կարծես թէ քաղաքի մէջ գտնուող հետևակ զինուորների ահագին բազմութիւնը բաւական չէր, քաղաք իջեցրին նաև թնդանօթաձիգ զօրքերը, որոնք գլխաւորապէս զինուած էին իրենց խոշոր ատրճանակներով և „Ղափաղլի“ հրացաններով։ Իսկ ընդհանրապէս դիակները կրում էին, բացի սրի, կացնի, կասթուրայի վէրքերից, 5-10 և աւելի գնդակի վէրքեր։ Յովհաննէս Կորկոտեանի վրայ հաշուած է 23 գնդակի վէրքեր...

Բաբերդ հայերը կազմում են տեղական մահմեդական ազգաբնակութեան 10-րդ մասը։ Ընայելով դրան, այնտեղ կուտակուած են եղել և անթիւ քանակութեամբ լազեր, բայց կոտորածը չի սկսուել, մինչև Երզընկայից զօրք չի եկել։

Ինչպէս յայտնի է, Բաբերդի շրջակայ գիւղերը բոլորովին զոհ գնացին խուժանի վայրագութեան, որովհետև անզէն էին և անպաշտպան։ Դեռ նոր էր այնտեղ զէնքի կարիքը մուտք գործել, դեռ նոր էր սկսուում այնտեղ կանոնաւոր յեղափոխական գործունէութիւնը, երբ կոտորածն առաջ եկաւ։ Այդ ժամանակ այնտեղի դաշնակցական հրոսակային խումբը ցրուած էր գիւղերում՝ ձմեռուան պատճառաւ։ Լուսհանք գիւղում այդ խմբի անդամներից մէկը հրացանը ձեռքին կարողանում է պաշտպանել հարիւրաւոր ամբոխի դէմ մի տուն, լիքը հարսներով ու աղջիկներով։ Մի ուրիշ գիւղում նոյն խմբի անդամներից մէկը լինում է միակ հրացանաւորը ամբողջ գիւղում։ Երբ լազերի վոհմակը մօտենում է, անվեհեր երիտասարդը առնում է հրացանը, դուրս գալիս դրանց դէմ և երկար ժամանակ թոյլ չէ տալիս այդ ահագին բազմութեանը գիւղը մտնել։ Նրա ընկնելուց յետոյ միայն լազերը կարողանում են մուտք գործել բոլորովին անպաշտպան գիւղը։

Տրապիզոնի մէջ, ինչպէս յայտնի է, սեպտ. 22-ին, դէպքի ժամանակ, երբ մասնակցում էր միմիայն ամբոխը, հայերից ոչ մի մարդ չսպանուեց։ Մինչև սեպտ. 26-ը կառավարութիւնը պատրաստեց իր կանոնաւոր զօրքը, իր սեփական հրացաններով զինեց տեղական խուժանը ու բազմաթիւ լազերին և յետոյ միայն կարողացաւ յաջողեցնել կոտորածը։

Զօրքերը նոյն դերն են կատարել և Բաղէշում։

Մինչև այժմ կոտորած չէ եղել Վանայ մէջ շնորհիւ միմիայն այն հանգամանքի, որ տեղական զինուորական ոյժը անբաւական է համարուում։ Կառավարութիւնը լուրջ պատրաստութիւններ է տեսնում զինելէ հրացաններով տեղական մահմեդականներին, ժողովել և պահեստի զինուորներին, հրաւիրել է մահմեդականներին, թնդանօթները ուղղել է դէպի հայոց թաղերը, կտրել է Այգեստանի ծառերի մի մասը, որպէս զի թնդանօթների ռումբերին արգելք չհանդիսանան, վեր-

*) Դրանց լուսանկարներն ուղարկուած են Եւրոպական լրագրոց։

չապէս ուղարկել է այնտեղ Բաղէշի կոտորածը կարգադրող փաշային... Կոտորած չի եղել դեռ ևս, նշանակում է այդ բոլոր պատրաստութիւնները դեռ քիչ են համարուում։ Սպասենք...

Իսկ Կարնոյ և նրա շրջակայ գաւառների գիւղերի պաշտպանութիւնից, որի մասին անցեալ անգամ գրեցինք, *) լուսոյ պէս պարզ է, թէ մինչև որ աստիճան անզօր են եղել հարիւրաւոր, հազարաւոր քրդերը ու լազերը մի խումբ զինուած կտրիչների դիմաց, երբ յարձակում է եղել առանց կանոնաւոր զօրքի օգնութեան։

Կրկնում ենք, որ մահմեդական ամբոխի ընդդիմադրական ոյժը չափազանցացրած է, որ առանց կառավարութեան դրդման, առանց նրա քաջալերութեան, առանց նրա վարժուած զօրքերի ջերմ աջակցութեան, մահմեդական ամբոխը չէր համարձակուիլ շարժուել իր տեղից, և եթէ շարժուէր էլ, շատ տեղ անհամեմատ մեծ կորուստ կունենար և դա լաւ դաս կը լինէր ապագայի համար։

*) Նշ. Դրատարակչինք նկող համարում

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՈՐԹՈՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ)

Փետր. 7-ին.—Զէյթունի պաշարեալները խոստանում են յանձնել իրենց պատերազմական զէնքերը, բայց ոչ որսորդականը։ Պահանջում են նաև, որ ամրոցի շինութիւնը կառավարական ծախքով լինի։

*
* *

Փետր. 7-ին.—Սոֆիայից գրում են.—Համաձայն Թրքական աղբիւրներից Դուռը հասած հեռագրների՝ միջնորդները Զէյթունի ապստամբներին առաջարկեցին ընդհանուր ներում և կեանքի ապահովութիւն, եթէ իրենց զէնքերը և Պապիկ ու Ասսի գլխաւորները կը յանձնեն։

Ապստամբները մերժեցին ասելով, որ իրենք բոլորն էլ եղբայրներ են և իրենց մէջ գլխաւորներ չկան։ Համաձայնում են իրենց զէնքերը վար դնել, եթէ միայն Զէյթունի և Այնթապի մէջ եղած միւսիւլմաններն էլ զինաթափ լինեն։ Բացի այդ՝ պահանջում են, որ վերջի վեց և առաջիկայ երեք տարիների հարկերի թեթևացումն լինի։

*
* *

Փետր. 7-ին.—Թրքական աղբիւրներից ստացած տեղեկութիւնների համաձայն, Զէյթունի կռիւի ժամանակ՝ Թրքական բանակից 6000 մարդ են կոտորուած։

ՆԱՄԱԿՆԵՐ

ՊԱՐՍԿԱ-ՏԱՃԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼԽԻՑ

IV

Տաճկաստանի վերջին դէպքերի ժամանակ՝ մի անգամ արդէն „կապը կտրած“ քրդերը Վասպուրականի բոլոր հայ գիւղերը տակն ու վրայ անելուց յետոյ, չբաւականանալով այն անթիւ, անհամար աւերումներով, կոտորածներով ու գազանութիւններով, որ գործ դրին դրժբաղդ հայ աշխատաւոր ժողովրդի գլխին, այն աստիճան ազատութիւն տուին իրենց անզուսպ կրքերին, որ յանդգնեցան արշաւանք գործել նոյն իսկ Պարսկաստանի սահմանակից հայ գիւղերի վրայ։ Քրդերի ախորժակը մի անգամից բացուել էր, շուտով յագենալու տրամադրութիւն դեռ ցոյց չէր տալիս։ Ամենից շատ նրանց հրապուրում էին Սալմաստի հայ գիւղերը, բայց իրենք էլ զգալով, որ որքան որ ցանկալի է, նոյնքան էլ դժուար է այդ հարուստ շտեմարանները մուտք գործելը, ուստի իրենց ուժերը նախ փորձեցին Կօթուրի փոքրաթիւ հայերի վրայ, թէև այս մասին արդէն գրուած է, բայց աւելորդ չհամարեցի մի քանի մանրամասնութիւններ ևս հաղորդել։

Մելանցոց, շամսկցիների, ալանդի քրդերի, մարզկցիների ահագին խմբերը պաշարեցին Կօթուր գիւղաքաղաքը, պահանջելով հայերից ամենից առաջ տեղական քահանայ Տէր-Վահանի, դարբին Գէորգի, Գրիգորի յանձնուիլը։ Հայերը, ի հարկէ, մերժեցին քրդերի ձեռքը յանձնել իրենց պաշտպաններին։ Կօթուրի կառավարիչ Մահմէդ Զաման խանն էլ փոխանակ հետևելու իր Տաճկաստանի պաշտօնակիցների օրինակին, հաւաքեց բնակիչներին, զինեց նրանց, մանաւանդ հայերին, և պատրաստեց դիմադրութեան։ Հայերը, քաջալերուած իրենց քահանայի օրինակից, քաջութեամբ դիմադրեցին քրդերի յարձակման և թոյլ չտուին նրանց մի քայլ անգամ առաջ գալու։ Քրդերը ստիպուած եղան վերջ ի վերջոյ հեռանալ՝ տանելով իրենց հետ միայն Սատմանիս գիւղի ոչխարները և 3 սպանուածների դիակները։ Հայերի կորուստը լինում է 1 սպանուած և 1 վիրաւոր։ Քիչ յետոյ մարզկեցիների ցեղապետ Շարաֆ բէյը նորից 600 ձիաւորով գալիս է Կօթուրի վրայ։ Դարձեալ ապարդիւն։ Նա դեռ այնտեղից չի հեռացել։ Գիւղի քահանան այժմ Խոյ է եկել՝ Շահին բողոքելու։

Թէև Տաճկաստանի քրդերին չյաջողեց Պարսկաստան մտնել, բայց դրա փոխանակ Պարսկաստանի քրդերը մեծ յաջողութեամբ մտան Տաճկաստան, միացած իրենց Տաճկաստանի եղբայրակիցների հետ։ ասենք պակաս բան չթողին Վասպուրականում և փառաւոր յաղթանակով ու մեծաքանակ աւարով իրենց տեղը դարձան։ Այդպէս էր հայդարանցի Նշանաւոր Դահար խանը, որը բնակւում է Խոյից դէպի Բայազէտ տանող ճանապարհի վրայ գտնուող Կարային կոչուած մեծ գիւղում՝ Ավաճուղի և Մաքսայ արանքում։ Սա այն Դահար խանն է, որն անցեալ տարի ընդհատում ունեցաւ Մաքսայ Թէմուր խանի հետ և ջարդաւոր յաղթուեցաւ և որի երկիրը ասպատակուեցաւ Մաքսայ խանի տասը հազարից աւել զօրքերից։ Այս տարի նա վրէժը լուծեց։ Պատ-

պուրականի Հայերից։ Միացած Տաճկաստանի Հայդարանցիների հետ, Դահար խանի մարդիկը կոտորել են բազմաթիւ Հայեր, աւերել են գիւղեր և իրենց հետ բերել են ահագին աւար։ Միմիայն Դահար խանին Աբաղայի դաշտից բերած աւարից բաժին է ընկել՝ 4000 ոչխար, 1500 կով ու եզ, 600 գոմէշ, 800 ձի և, բացի այդ, ահագին քանակութեամբ կահ կարասիներ, երկրագործական գործիքներ և այլն։

Եւ այսօր Հայ ժողովրդի երկար տարիների ընթացքում դառը քրտինքով ձեռք բերած աշխատանքը՝ Դահար խանի նման աւազակը հանգիստ նստած վայելում է և փառք տալիս Ալլահին, յաջող արշաւանքի համար։ Սակայն, ինչպէս երևում է, նա երկար ժամանակ չի կարողանալու վայելել իր „հալալ աշխատանքի“ պտուղը. նա աւելի դժբախտ է լինելու այդ կողմից, քան իր Տաճկաստանի եղբայրակիցները, որովհետև Պարսից կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում իր երկրում ապրող այդ աւազակին պատժելու համար։

***

Դահար խանի մարդիկ աւարի հետ բերել են և 3 նոր ձևի հրացան՝ որ նրանց յաջողել է վերցնել Վասպուրական անցած Դաշնակցական խմբի սպանածներից։ Այդ խմբի քրդերի վրայ թողած սարսափի և ահագին տպաւորութեան մասին գաղափար կարելի է կազմել այն երգերից, որ յօրինել են Սօմայի քրդերը։ Այդ երգերի մէջ գովաբանում են այդ „չտեսնուած կտրիչներին“, մանաւանդ մէկին՝ երկար հասակով, սև միրուքով, որի գնդակները միշտ ճակատից էին կպչում։ Դրան, յայտնի չէ ինչու, քրդերը մկրտել են „Դուման“ անունով։ Գովաբանում են խմբի նոր տեսակ հրացանները, որոնց գնդակներն իրենք են գնում թշնամուն գտնում։

Խմբի մասին մանրամասն ստոյգ տեղեկութիւններ դեռ էս չկան. ուղարկած տեղեկութիւնները մեր ձեռը չեն հասել։ Ո՞վ է կենդանի, ո՞վ է նահատակուած, դեռ ճիշտ յայտնի չէ. միայն հաստատապէս գիտենք, որ „երկար հասակով ու սև միրուքով“ Դուման (մենք էլ այդպէս կը կոչենք նրան), որին „ոչ մի գնդակ չի կարող մնասել նրա կրած զրահի պատճառաւ“, բոլորովին անվնաս է և պատրաստ դեռ շատերի ճակատները գնդակներով դրոշմելու։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

ԿԵՍԱՐԻԱ

—

Այն կոտորածներէն, որոնք, իբր շարունակութիւն Սասունի ահռելի դէպքին, կը շրջէին քաղաքէ քաղաք, համաճարակի մը պէս՝ որ կոչնչացնէ իր շուրջը ինչ որ գտնէ ընչաւոր, կը գուշակէր արդէն, թէ Կեսարիան ալ զերծ չպիտի կարենայ մնալ։ Հայ ժողովուրդը արդէն մեծ սարսափի մէջ էր. բայց „բարեխնամ“ կառավարութեան այն յաճախակի յայտարարութեանց վրայ, թէ ամեն կերպ միջոց ձեռք առնուած են ո՛ և է դէպք չը պատահելու մասին, սկսած էր հանդարտիլ և իր գործը շարունակել միամտօրէն։

Եւ իրականութիւնը չուշացաւ երևան հանելու կառավարութեան խարդախ մեքենայութիւնը։ Նոյեմ. 18-ին, շաբաթ օրը, մինչ ամեն մարդ իր գործով կը զբաղէր, ժամը 9-ին, յանկարծ, երեք տարբեր կէտերէ, հրացանի երեք պայթիւններ կը թնդացնեն օդը. ասիկա նշան մը էր իրենց վայրագ գործին սկզբնաւորութեանը։ Անմիջապէս, գրեթէ վայրկենի մը մէջ, ինչ որ կը հասատէ թէ արդէն խորհուած և պատրաստուած գործ մը էր. հազարաւոր թուրքեր, մոլեռանդ ու բիրտ, կը թափին փողոցները՝ սուրերով, ռէվոլվէրներով, բահերով ու տապարներով և կատաղի յարձակում մը կսկսին շուկային ու միևնոյն ժամանակ հայ թաղերուն վրայ, անխնայ ջարդելով, դիակներ սփռելով իրենց շուրջը։ Շուկայի հայերէն մաս մը, սարսափահար, ի փախուստ կաճապարէ դէպի իր տունը. սակայն ամենքն ալ գրեթէ թուրք խուժանին անգութ հարուածը կընդունէին՝ մեծ մասամբ գետին ընկնելով անկենդան, միացեալներն ալ կիսամեռ վիճակի մէջ հազիւ կարենալով հասնել իրենց տունը։ Մէկ մասն ալ խանութներու և խուղերու մէջ կապաստանի. այն շէնքերը, որոնք կրնային իրենց ամրութեամբը տապարի հարուածներուն դիմադրել, կրցին պահպանել իրենց մէջ պահուրտող խեղճերը, թէև հոգեւարք վիճակի մէջ։

Հարիւրի չափ հայեր Փամպուգ խանը փախած ապաստանած էին. թուրք խուժանը անոր վրայ ալ կը յարձակի և դռները կոտրելով ու պատերը փլցնելով՝ կը մտնէ ներս և սրէ կանցնէ ամենքն ալ, առանց բացառութեան։

Յարձակում մը ալ կուտան Մայր-եկեղեցւոյ դիմացը գտնուող Սէլէտտին անուն բաղնիքին վրայ, ուր 200-250 հայ կիներ ու տղաքներ կը լացուին. հոն ալ սպանութիւն, լկանք, հոն ալ խժդժութիւն, բարբարոսութիւն։

Նոյն գազանային գործողութիւնը, ինչպէս ըսի, կը կատարուի նաև թաղերու մէջ, տունները կը թալանին, սպանութիւններ կը կատարուին այնպիսի միջոցներով՝ զորս թուրքը միայն կարող է ստեղծել և գործադրել։

Եւ ասով ալ չեն գոհանար այդ մարդ-գազանները։ Միևնոյն ժամանակ կրակի կուտան երեսուն չափ տուներ, միասին այրելով բնակիչները։ Այս դժբախտներու շարքին մէջ է նաև քաղաքիս պատուաւորներէն Աւետիս Էֆ. Երէցեան, իր ամբողջ ընտանիքով։

Ա՜հ, սարսափելի էր լսել այրերու, կիներու և մանուկներու ճիչերը, որոնք կը բարձրանային համայնաձուխ բոցերու ճարճատիւններուն մէջէն և հոնդիւները այն ոգևարքներուն, որոնք շարունակ կը լսէին փողոցներէն, տուներէն, խաներու ու խանութներու խորերէն։

Եւ միայն այրերը չեն, որ կը կատարեն այս քըստմնելի գործը, մարդու արիւնը սառեցնող այս դիժոխային արարքն. թուրք կիներն ալ, որոնք կանանոցի մէջ մեղկութեամբ փակուած՝ մեղք կը համարին իրենց մարմնոյն ամենափոքր մէկ մասը ցոյց տալ օտարներուն, այսօր, հակառակ Մուհամմէդի այս խիստ պատուէրին, բացերես կերթան կուգան՝ կողոպուտ և աւար փոխադրելով շարունակ։ Ի՞նչ նշանակութիւն կրնայ ունենալ կրօնական այդքան զանցառութիւն, քանի որ անդին ա-

ւելի մեծ գործ մը կսպասէ իրենց. գործ մը, որ հոգեւոր և մարմնաւոր բարիքներ կը խոստանայ այնքան։

Դիշերը ժամը 5-ին միջոցները, վերջապէս կառավարութիւնը կը բարեհաճի զինուորներ հանել „խաղաղութիւնը վերահաստատելու“ համար։ Կամաց կամաց կը դադարին ճիչերն ու աղաղակները, պայթիւններն ու կացինի հարուածները. բայց աւարառութիւնն ու հրդեհը անարգել կը շարունակուի մինչև լոյս։

Կիրակի օրը, նոյեմ. 9-ին, թուրքերէն ոմանք ուզելով նորէն իրենց արիւնոտ գործին սկսել, կը յայտարարեն, թէ „կեռավուրները մեծ ժկիթին վրայ յարձակած են“։ Անմիջապէս կը հաւաքուի թուրք զինեալ խուժանը և յարձակելու կը պատրաստուի։ Ասոր առջևը կարելի կըլլայ առնել կերպով մը։ Բայց աւարառութիւնը կը շարունակուի համարձակ։

Յաջորդ օրը, երկուշաբթի, առաւօտեան կանուխ, նորէն կսկսի հրացաններու պայթիւնն ու յարձակումը հայ թաղերու վրայ։ Յետոյ այս յարձակումը կը կատարուի 1-2000 զինեալ խուժանի մը կողմէ, կը դառնայ Մայր-եկեղեցիի վրայ, ուր հարիւրաւոր կիներ ու աղջիկներ, այրեր ու տղայքներ ապաստանած էին դէպքին առաջին օրը։ Տեսարանը ահռելի է։ Սուրերը կը ճոճան, գնդակները կը սուրան դէպի ներս՝ սենեակներու մէջ, դաւիթը և ամեն կողմ։ Բոլոր ժողովուրդը կը համախմբուի տաճարին մէջ. մայրը կը փաթթուի իր զաւակին, զաւակը իր մօրը, եղբայրը եղբօրը և վերջապէս ամենքն ալ իրարու գիրկ ընկած պլլուած՝ կուլան, կը հեծկլտան, կաղօթեն, ճիչեր կը բարձրացնեն, յուսահատութեան ճիչեր՝ յուսոյ ու հաւատքի այդ յարկի տակ։ Դուրսը ամբոխը կը կատղի հետզհետէ ու կը յարձակի դրան վրայ՝ զայն խորտակելով՝ ներս խուժելու և ամբողջովին սրէ անցնելու հոն ապաստանողները. հարուածները կիջնան դրան վրայ արագարագ, կացինի կատաղի հարուածներ՝ մահուան սառսռազդեցիկ ներկայութիւնը յիշեցնող։ Առաջնորդն ալ յուսահատ՝ կը պատուիրէ քահանաներուն հաղորդութիւն տալ ժողովրդին... ու կսկսի սրտաճմլիկ արարողութիւնը։ Փրփրած ամբոխը, կատաղութեան ահռելի թափով մը, կը շարունակէ իր ճիւաղային գործողութիւնը. բայց դուռը, երկաթապատ և ամրակուռ, անյողդողդ կը մնայ. յետոյ, այս փորձէն յուսակտուր՝ կսկսին շրջապատը փլցնել, և կը յաջողին, բայց երկրորդ պատ մը կելլէ հոն իրենց դէմ։ Այս միջոցին կը հասնին զինուորները և բաւ համարելով եղածները, կը ցրուեն թուրքը խուժանը։

Հարիւրաւոր զոհեր տուին, հարիւրաւոր ալ վիրաւորեալներ կան, շատեր անյոյս վիճակի մէջ։ Քանի՞ չափ չափահաս աղջիկներ առևանգուեցան, որոնց մէկ մասը տակաւին չէ վերադարձած, և յայտնի չէ թէ ո՞ւր և ո՞ր գաղանի ճանկին մէջ կը գտնուին։

Կատարեալ սարսափ կը տիրէ քաղաքին մէջ. այսօր, կոտորածի երրորդ օրը, դեռ ոչ մէկ եկեղեցի կայ բացուած, ոչ մէկ վարժարան և ոչ մէկ խանութ։

Շատեր եկեղեցիներու մէջ փակուած կը մնան տակաւին. ոչ ուտելիք ունեն, ոչ հանդերձեղէն և ոչ իսկ վերմակ մը՝ ինքզինքնին պատսպարելու համար ցուրտին դէմ։ Ի՞նչ պիտի ըլլան այս թշուառները, եթէ օգնութեան ձեռք մը չհասնի իրենց։

Կոտորածի միջոցին շատ մը ապրանքներ տարուեցան զինուորներու կողմէ՝ իրենց պէտքին ծառայեցնելու համար։ Պատոյտ մը ըրէք շրջակայ գիւղերը և պիտի տեսնէք, որ գրիմիցներ են զինուորներուն ծախսածը. այն գրիմիցներէն, զոր իբր զարդ, իրենց մազի հիւսկէններուն վրայ կը կարեն հայ կիներ և աղջիկներ։ Այցելութիւն մը տուէք վիրաւորեալներուն և պիտի տեսնէք, որ սիրնի վերքեր ունեցողներ ալ կան։

* * *

Կեսարիոյ կոտորածին վրայ, շրջակայ հայ գիւղերն ալ յարձակում կրեցին։ Հազարաւոր թուրք գիւղացիներ երկու անգամ յարձակեցան Նիրզէ գիւղին վրայ և կողոպտեցին ուտեստ, զգեստ, կարասիք, անասուն և ամեն ինչ։ Մէկ քանի սպանութիւններ ալ կատարեցին սարսափելի եղանակներով։ Տեղւոյն քահանային խնամին կսպանեն՝ նախ աչքերը փորելով, յետոյ կացինի հարուածներով փշուր փշուր ընելով ծունգերը և թեւերը։

Նոյնպէս հարիւր գաւազան իջեցնելէ յետոյ, ուրիշ հայու մը գլխուն վրայ, կացինի սոսկալի հարուած մը տալով սրբանին՝ երկուքի կը բաժնեն և, ասդին անդին քաշկռտելէ ետքը, կսկսին դարձեալ տապարով ջանջախել, ծունկերն ու թեւերը և ամենէն վերջը՝ հարուած մը ալ վզին իջեցնելով՝ կոչնչացնեն։

Նմանապէս կողոպտուած են Սըվղը և Կիկի գիւղերը, զուտ հայաբնակ։ Այս վերջինը երրորդ անգամն է, որ կը թալանի այս տարի։ Հիմակ ուտեստէ և ուրիշ ամեն տեսակ պիտոյքներէ բոլորովին զուրկ՝ վերջին ծայր թշուառութեան մէջ կը գտնուին։

ՏՐԱՊԻԶՈՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ

—

Սեպտեմբեր 26-ի ահեղ կոտորածին ու վայրագ թալանին վերջանալուն ատենները, կուսակալը մունետիկներ կանչել տուաւ, թէ այլևս ամեն ինչ վերջացած է, միայն թէ ամեն հայ պէտք է անձնատուր ըլլայ։ Պատահեցան և միամիտ խեղճեր, որք հաւատալով՝ տուներէն դուրս ելան ու ամենասոսկալի կերպով խողխողուեցան։ Յաջորդ և հետևեալ օրերը՝ կառավարութիւնը հետամուտ եղաւ չմեռածները ձերբակալել ու հարցաքննութեան ենթարկել. այնպէս որ՝ Կիւզէլ-Սարա զօրանոցը, հայոց քլիւպը, Կոստանդինօպ խանը ու քաղաքական բանտը հայերով լեցան։

Ռիզէի զինուորական հրամանատար Ֆէրիք Սալէհ փաշայի նախագահութեամբ կազմուած ատեանը 20 օր վերջը գործել սկսաւ, դատելու ու պատժելու համար յանցաւոր հայերն։ Տեսէ՛ք, տեսէ՛ք սուլթանի արդարադատութիւնը մինչև ո՞ւր կը հասնի։—Կոտորել անզէն ժողովուրդը, ջարդել խաբէութեամբ, կողոպտել ունեցածնին և ապա ամիսներով բռնել բանտել ու չարչարել։ Ո՞վ է դատապարտուողը, ո՞վ է ոճրագործը։

Իբր թէ գործ տեսնողը զինուորական ատեանն է, մինչդեռ վալիին կամքը, տաճիկներուն փուճ զրպարտութիւնները միշտ արդարութեան տեղը կը բռնեն. ուր

կը փնտռենք „արդարութիւն“:

Վերաւոր Բահրի փաշայի Պոլիս ճամբուելէն 10-15 օր վերջ՝ սկսան հայերն մաս առ մաս արձակել, իսկ մնացածները քաղաքական բանտն հաւաքել, որ այժմ գլխաւորաբար երեք բաժանմունք ունի: Մէկը արտաքին մաս, ուր առժամանակեայ թեթև կերպով բանտարկեալներն կը մնան. մնացած երկու մասերն ալ պարսպի մէջ առնուած՝ „հայերուն տեղն“ է. մեծ երկաթեայ դուռով չէնք մ'է, ուր կան շղթայակապերն ու առանց շղթայիները: Իսկ այն մասը, որ „Բօլիս“ կըսուի՝ 5 հատ փոքր խցիկներէ կը բաղկանայ. ասոնք յանցանքը շըխոստովանողներու յատկացուած են: 7 ոտք լայնութիւն և 9 ոտք երկայնութիւն ունին, հաստ պատերով շրջապատուած, ուր կը տիրէ մշտական մթութիւն և խոնաւութիւն. իսկ լուսոյ համար ալ շատ փոքրիկ պատուհան մը՝ իբր շնորհ սուլթանի՝ չէ զըլացուած: Աղտեղութիւնը չպէտք է հարցնել, ամեն ինչ հոս, իր մէջ, դուրս ելնել չկայ... Հապա մուկերն ու կարիճներ՞ն: Ասանկ գարշելի սենեակներու մէջ մնացած են մեր բանտարկեալներն, զգուած ո և է հաղորդակցութենէ և շարունակ ալ կը նեղին և կը կողոպտուին Մուսա օնպաշիի պէս անիծուած պահապաններէ և իւր նմաններէ: Այս հրէշային բանտն իր շղթաներուն ճըռնշման ներքև շատ հոգիներ քամեց, սակայն դեռ կը մնան հոգիներ, որոնց ուղղուած շատ մը խայտառակ հարցումներ հոս պատմել զանց առնելով, համառօտ մը ներկայացնենք միայն կառավարութեան անոնց մասին առաջ բերած ամբաստանութիւններն:

Մանուկ Թադոսեան, 44 տարեկան, ատաղձագործ: Երբ Տէր Վահան Խոյեան քահանան ձերբակալելով՝ վրայէն վեց հաւաքածեան մը գտնուեցաւ, նա յայտնեց, թէ այդ զէնքը Մանուկէն առած է: Կառավարութիւնը Մանուկի տունը խուզարկելով՝ հետևեալներն գտաւ.

ա. Հ. Յ. Դաշնակցութեան „Դրօշակ“ թերթեր և գրքեր,

բ. Հ. Յ. Դաշնակցութեան Տրապիզոնի Կոմիտէի կնիքն,

գ. Մէկ հատ ռուսական պերտանկայ հրացան, 80 փամփուշտով:

Մանուկ պատասխանած է, թէ ինք ատոնք Պօղոս Կօթոշլեան անուն անձէն ժամանակ մը պահելու համար առած է: (Սա կուրին մէջ մեռաւ):

2. Ստեփան Թադոսեան, ատաղձագործ, 53 տարեկան, Մանուկի եղբայրն ըլլալուն համար բանտարկուած է:

3. Գրիգոր Թադոսեան, ոսկերիչ, 40 տարեկան. նոյնպէս Մանուկի եղբայրն ըլլալուն համար բանտարկուած է:

4. Տէր Վահան քահանայ Խոյեան, 40 տարեկան, ինքնապաշտպանութեան համար րէվոլ մը ունենալուն և կոտորածին ժամանակ տան մը մէջ՝ թէ ինքզինքն և թէ քանի մը ընտանիքներ խուժանի դէմ պաշտպանած ըլլալուն համար բանտարկուած է: Երբ իրեն հարցուած է, թէ „դու քահանայ մարդ, ի՞նչ բանի համար զէնք կը կրես“, պատասխանած է, թէ „միայն անձս պաշտպանելու համար կը պահեմ“:

5. Հաճի Մինաս Թիւթիւնճեան, 30 տարեկան, սըրճարանապետ, ասիկա շատ մը տաճիկ թշնամիներ ունենալուն՝ 12 օր փողոց չելաւ: Տեսաւ, որ կառավարութիւնը զինքը խստիւ կը փնտռէ, ինքնակամ անձնատուր եղաւ և րէվոլն ալ յանձնեց: Կամբաստանի, թէ Բահրի և Ֆէրիդ փաշաներու վրայ զէնք պարպող տըղայոց տեղը գիտէ, հայ դասատուները միշտ իրեն սըրճարանը երթալովին՝ ինքն բոլոր գաղտնիքներուն ծանօթ է և կը ճանչնար կոմիտէի անդամներն: Հաճի Մինաս ամեն կերպով իր անտեղեակ ըլլալն յայտարարած է:

6. Յովհաննէս Պըյըքեան, 31 տարեկան, ուսուցիչ Տրապիզոնի ազգային վարժարանին: Կոտորածի օրերն իրենց գիւղի (Կալաֆկայի) տաճիկ աղաները բռնութեամբ քանի մը խեղճ հայերէ ստորագրութիւն առած են, սա իմաստով, թէ Յովհաննէս գիւղերու մէջ Մարթինի հրացան պտտցուցած է եղեր, երկրորդ, թէ Տէր Վահան քահանան և փաստաբան Յարութիւն Շահրիկեանը ու ինք ամառն գիւղերն պտտելով՝ հայկական Յեղափոխութիւն քարոզած են: Այս ամբաստանութեանց վրայ յենելով՝ նաև իր երկու տներէն գտնուած երկու հրացաններու պատճառով, իբր վնասակար մէկը բանտը կը մնայ:

7. Յակոբ Գահվէճեան, սափրիչ, 21 տարեկան, ամբաստանուած է, թէ կոտորածի ժամանակ տնէն հրացանով մը կուած է: Յակոբ կը պատասխանէ, թէ կոտորածի ժամանակ ինք տանն էր և երբ իր վրայ յարձակում եղած է, անցած է քովի դրացիի տունը. իսկ կրակ ընողները երկու ուրիշ երիտասարդներ եղած են, որոնք յետոյ ալ սպանուած են. ինքը զէնք չունէր ու նոյն օրը զօրաց յանձնուած է: Գրաւված հրացանի մը համար ալ երբ ըսին իրե՞նն է. նա յայտարարեց, թէ կրնայ ըլլալ, որ մեռնող տղայոց ըլլայ:

8. Գրիգոր Վարդանեան, 27 տարեկան, ուսուցիչ սա կամբաստանի իբր Հայ Յեղ. Դաշնակցութեան կոմիտէի գրագիր և Մանուկին գործակից. ժողովրդին ալ յեղափոխութիւն քարոզող: Գրիգոր այդ բոլորը, իբր զըրպարտութիւն, կը մերժէ:

9. Վլէն Գասպարեան, 25 տարեկան, վաճառականի գործակատար: Սա կոտորածին ժամանակ Կոնստանտինոֆի խանի մէջ 24 տեղերէ վիրաւորուած և աջ ձեռքի 4 մատները կտրուած և ընկած է իբր մեռեալ ամբողջ 15 ժամ. սա սպանուածներու մօտ մինչև առաւօտ պահուելով՝ երբ տաճիկներն կուգան ողջ կը տեսնեն, պատգարակով մը քաղաքական հիւանդանոցը կը փոխադրեն, ուրկէ սեպտեմբերի 28-ին դարձեալ պատգարակով զինուորական ատեանը տարուելով՝ հարցուցեր են, թէ իրենց սենեակէն զէնք պարպուեցա՞ւ.—ոչ, պատասխանած է: Այս երիտասարդը ապա զինուորական հիւանդանոցը տարուեցաւ, ուր 50 օր մնալէ յետոյ՝ դեռ չբժշկուած՝ բանտը բերուեցաւ:

10. Ալֆոնս Փեչեան, 25 տարեկան, ընդհանուր պարտուց վարչութեան ապահովութեան պաշտօնեայ. ասոր մասին այդ պաշտօնատան մէջ գտնուող իր հակառակորդ տաճիկներն ըսեր են, թէ դէպքէն երկու օր առաջ վրան րէվոլ մը տեսած են: Ինք մերժեր է, ուրիշներ ալ եկած ու հաստատած են, որ սուտ է:

11. Վարդան Տէր Համբարձումեան, 19 տարեկան, բանաստեղծ մը: Այս ազնիւ երիտասարդի վրայէն, ասկէ վեց ամիս առաջ, „Դրօշակ“ թերթ մը և իր մէկ քերթուածը գտնուեցաւ կռիւ մը վերջ: Կուսակալն հարցուց՝ „ի՞նչ են ասոնք, կարդայ տեսնեմ“:

—„Ես քու թարգմանդ չեմ“:

—„Ո՞ւրկէ առիր այս թերթը“։

—Ինծի կուգայ։

—Ո՞ւրկէ օրինակեցիր այս գրուածքը։

—Ես գրեցի։

—Դու չես կրնար, քու կարողութենէդ վեր է։

—Ես գիշերը երազիս մէջ տեսայ, առտուանց ելայ գրեցի։

Վարդան ընդհանուր ներման արժանացած՝ իր առջի կեանքը սիրով կը շարունակէր. այս կոտորածն վերայ հասնելուն՝ իբր կասկածելի մէկը, ձերբակալուած բանտը կը մնայ։ Ամբաստանութեան գլխաւոր կէտն է, ի՞նչպէս ողջ մնացեր ես։

12, 13, 14. Աբրահամ, Պաղդասար և Գրիգոր Աւետեան երեք եղբարք, Սաթարիա գիւղէն։ Ասոնց գիւղը թալանելէ մի քանի օր յետոյ, երբ ասոնք արտերը գնացած՝ կաշխատէին, որպէս զի գէթ արտի հունձքը ապահովին, զինուորներ գալով կը ձերբակալեն և մօտակայ Բլաթանա աւանը բերելով՝ կը բանտարկեն։ Ամբաստանուած են՝ թէ իրենց դրացի. տաճիկներուն տունը մտնելով՝ անոնց ինչքերը կողոպտած և կանայքը խլած են։ Ամբաստանեալները յայտարարեցին՝ թէ ադոնք բոլորը սուտ են. մենք, որպէս զի կարենանք մեր ձմեռայ պաշարը պատրաստել, օրն ի բուն արտէն դուրս չէինք ելլեր։ Թէև նոյն տեղի գայմագամն ալ ասոնք հարցաքննած ատեն տեսած և լաւ հասկցած էր զրպարտութիւն ըլլալը, այսու հանդերձ Տրապիզոն ղրկեց, որոնք դեռ բանտը կը մնան։

15. Մկրտիչ Մինասեան, Սաթարիայէն։ Ասոր տունը այրելէն յետոյ, ինքն ալ ապաստանած է վերը յիշած երեք եղբայրներու տունը, հետևաբար աս ևս, ըստ յիշեալ ամբաստանութեան, մեղսակից համարուելով՝ բանտը կը մնայ։

16. Պետրոս Աւետիքեան, 37 տարեկան, „փէշտմալ-ճի“ ոստայնանկ։ Սա կոտորածէն մէկ քանի օր յետոյ, անօթի մնալուն՝ կելնէ կերթայ Կապան գիւղը, իր եղբօր մօտ, որպէս զի մէկ երկու կոտ կորեկ առնելով՝ բերէ իր ընտանիքը սովէն ազատէ։ Բայց օր մը վերջը զինուորականք նկատելով՝ անմիջապէս զայն կը ձերբակալեն ու մօտակայ գիւղը տանելով, սրճարանին մէջ գիշերը մինչև լոյս կը ծեծեն ու կը հայհոյեն, պահանջելով, որ փաշաներն վիրաւորող տղայոց տեղը իմացնէ։

Միւս օրը, առաւօտուն քաղաք կը բերեն, ճանապարհին մահուան սպառնալիքներ ընելով։ Զինուորական ատեանն ալ իրմէ կը պահանջէ ըսել, թէ տղայք ո՞ւր են և ռազմամթերքը ո՞ր տեղ պահուած է։ Պետրոս կըսէ, թէ ես իմ օրապահիկէս զատ բանի վրայ չէի մտածեր և այժմ ալ չեմ կարող մտածել, ես ատանկ բաներէ բնաւ լուր չունիւ ինչ որ ըսեմ, ձեզ խաբած պիտի ըլլամ։

17. Վարդգէս Տէր Օհանեան, 31 տարեկան, յանձնակատար վաճառական. իր գրասենեակը գտնուած մէկ բէվօլին համար բանտը կը մնայ, թէև պաշտօնապէս հաստատուած է, թէ երբէք կրակ ըրած չէ։

18. Սեդրակ Տէր Առաքելեան, 24 տարեկան, մանիսագործ կիւմիւշխանեցի. կամբաստանուի նախ Պոլսէն գալուն համար, երկրորդ՝ իբր թէ Արմենակ Գասպարեան անուն անձին հետ Պոլսէն բլրան վրայ տեսնուած է։—Թէև իրար ծանօթ չեն։

19. Սարգիս Կակոսեան, 44 տակեկան, նպարավաճառ։ Ասիկա իբր թէ Մարթինի հրացան և Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կոմիտէի հետ յարաբերութիւն ունի։ Սարգիս այս ամենը բացարձակապէս մերժած է։ Տունը խուզարկելով՝ ոչինչ չէ գտնուած։

20. Պօղոս Մինասեան, 22 տարեկան, բլաթանացի, Բէժիի աշխատաւոր։ Ասիկա դէպքէն 25 օր վերջ իր աներոջը հետ գեղը գնացած ատեն, ոստիկաններ ու պաշիբոզուկներ կը ձերբակալեն և Բլաթանայի բանտը տանելով՝ կը բանտարկեն։—Կամբաստանուի՝ իբր „Կոմիտէի“ անդամ և թէ ճանապարհին բէվօլը ծովը նետած է։ Տաճիկ բանտարկեալներն ու տեղւոյն հարիւրապետը սպառնացեր են ըսելով՝ „եթէ տաճկնաս, քեզ կազատենք, ապա թէ ոչ, կսպանենք“. նա ալ կը պատասխանէ՝ „կը լամ տաճիկ, միայն թէ զիս Տրապիզոն տարէք“։ Զինուորական ատեանն ալ միևնոյն ամբաստանութեան վրայ յենլով՝ հարցապնդումներ կընէ։ Եւ որքան որ Պօղոս իր բանէ մը լուր չունենալն կը յայտարարէ, դարձեալ բանտը կը մնայ։

21. Միհրդատ գասպարեան՝ 29 տար. Բէժիի աշխատաւոր։ Սա կամբաստանուի, թէ երբ Բահրի ու Գէրիգ փաշաները վիրաւորեցին, դէպքին տեղը մի քանի ականատեսներու մօտեցած և ըսած է՝ „թէ որ տէրրօրիստներու ովքեր լինելն կառավարութեան իմաց տաք, ձեզ կսպանեմ“։ Միհրդատ ուրացած է ըսելով թէ այդ պահուն ինքը Բէժիի գործերով զբաղուած էր, և երեկոյեան դէմ, երբ տուն կերթար՝ ոստիկաններն զինք յանկարծ ձերբակալած, ուղղակի իրեն տունը տարած են, որ պաշարուած էր, յետոյ բանտ բերած են. ուրիշ բան չի գիտեր։

22. Արմենակ Գասպարեան, 24 տարեկան։ Ասոր ըսած են՝ թէ Բահրի և Հրամանատար փաշաները վիրաւորողներէն մէկն ալ դուն ես, քեզ տեսնողներ կան։ Պատասխանած է, „ես դէպքին օրը Զէֆանոս գիւղն էի. նոյն գիշերը ժամը երեք ու կէսին 5 հատ ոստիկաններ գիւղ գալով՝ զիս հոս բանդ բերին, ի՞նչ բանի համար, չեմ գիտեր. այդ դէպքը հիմա ձեզմէ կը լսեմ“։

23. Ստեփան Գասպարեան, 22 տարեկան։ Ասոր ըսեր են՝ թէ „փաշաներուն վրայ ատրճանակ պարպողներէն մէկն ալ քո եղբայրդ է, հետևաբար քեզմէ կուզենք, տեղը ըսէ, ո՞ւր է“. սա ալ պատասխանած է՝ թէ ինքը եղբօրը այդպէս բան ընելէ և ուր լինելէն բնաւ տեղեկութիւն չունի։

24. Ստեփան Արսլանեան, 50 տարեկան, սափրիչ։ Ասոր կըսեն՝ թէ որովհետև Խաչիկ որդիդ փախած ու կորած է, անպատճառ փաշաներուն զէնք պարպողներէն մին է. անտարակոյս տեղը գիտես, ուստի պէտք է իմացնես մեզի“։ Ստեփան կը յայտնէ՝ իրաւ է թէ այս տղան մէջ տեղ չկայ. բայց ինչո՞ւ, ինք ալ լուր չունի. իսկ ուր ըլլալն ալ իրեն բոլորովին անծանօթ է։

25. Պօղոս Արսլանեան, 26 տարեկան, ատաղձագործ։ Ասկից ալ կը պահանջեն իր Խաչիկ եղբայրը։ Սա յայտարարած է՝ թէ ամեն պարագայի մէջ ինքը անտեղեակ է։

ԴԻՊԼՕՄԱՏԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ

—

Անգլիայի առաջին մինիստրը, լորդ Սալիսբիւրին յունիս 31-ին արտասանել է քաղաքական մի ճառ, որտեղ ի միջի այլոց շօշափել է և Հայկական հարցը։

Մենք բոլորովին նպատակ չունինք այստեղ վերլուծելու այդ ճառը ու մի համեմատութիւն անելու նրա մի այլ ճառի հետ, որ արտասանել է մի քանի ամիս առաջ նոյն հարցի մասին և ցոյց տալու այն տարբերութիւնը, թէ լեզուի և թէ ոճի, որ գոյութիւն ունի այդ երկու ճառերի մէջ, ցոյց տալու, որ մի քանի ամիս առաջ շանթեր արձակողը, այսօր . . . Ո՛չ. միայն մատնացոյց լինելով լորդի վերջին ճառի վրայ, մենք հրաւիրում ենք ընդհանուրի ուշադրութիւնը, աւելացնելով, որ նա, իսկապէս այդ ճառն է հաւատարիմ արտայայտութիւնը դիպլոմատիայի տրամադրութեան։

Լորդը քաջութեամբ խոստովանելով, որ Անգլիայի ուժերից վեր է դրաւել Հայաստանը, որ եթէ իրենք պետութիւնների հետ համերաշխ չգործեն, ստիպված կը լինեն նրանց դէմ գործել, որը „կարող է առիթ տալ աւելի սոսկալի չարիքների, քան Հայկական սարսափներն են“ և ապա լորդը առանց խղճահարելու, առանց կարմրելու աւելացնում է. „մի՞թէ արդեան է տեսնել, որ խաղաղութիւնը որոշ չափով վերականգնած է, որ սուլթանը համաձայնել է մոցնել բէֆորմներ և դրան իրականացնելու համար պիտի նրան, սուլթանին ժամանակ տալ“։

Այս ճառը կարելի է համարել եւրոպական դիպլոմատիայի վերջին խօսքը Հայկական խնդրի վերաբերմամբ, եթէ կը տեսնեն ներկայ քաղաքական հանգամանքները և եթէ հայ ժողովուրդն էլ կը շարունակէ իր անտարբերութիւնը։ Այս դրութեան հետևանքն էլ պարզ է։ Հայ ժողովուրդը անկօնտրոլ, անպայման կերպով գտնուելով դահիճի ձեռքում, նրա տրամադրութեան տակ, պիտի շարունակի կոտորածը, աւերումը, այսինքն հայ տարրի ոչնչացումը Ցաճկահայաստանում։

Այսքան զոհերից յետոյ, նա է դարձեալ մեր իշխանը, մեր տէրը, ահա մեր դրութիւնը։ Մենք կանգնած ենք մենակ մեր ոխերիմ թշնամու, մեր դահիճի դիմաց։ Հայ ժողովուրդը պէտք է լաւ ըմբռնի այդ ծանր դրութիւնը, լաւ հասկանայ այն մեծ վտանգը, որ սպառնում է իրեն։

Ի՞նչ անել։

Մենք արդէն շատ անգամ ենք այս հարցին պատասխանել շեշտելով թէ մի՞ակ միջոցը կատաղի կռիւն է. պէտք է աւերել, քանդել, կոտորել, որով մի կողմից մենք սարսափ տարածած կը լինենք մահմեդական ամբոխի վրայ, որը խրախուսւում է կառավարութիւնից և միւս կողմից, կստիպենք „Մեծ-ոճրագործի“ պաշտպաններին հանդիսատեսի դերից դուրս գալ որովհետև իրերի այդ դրութիւնը տանում է դէպի այն կատաստրոֆը, դէպի այն մեծ սարսափները, որից զարհուրում, դողում է դիպլոմատիան, և որից խոյս տալու համար նա զոհ է բերում հայ ժողովուրդը։ Լորդը իր նոր ճառով հաստատում է հազար անգամ կրկնուած այն միտքը՝ թէ Հայկական հարցը վճռողը կռիւն է։

ՆԻՒՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական ընդուկի մէջ ստացուած են.

Մատանի 25 օսմ. ոսկի, Պարտիզպան 25 օսմ. ոսկի, Վրէժ քաղաքից Ս. Ց. 200 ղրան, Մ. Ց. Ընկ. 1200 ղր., Ե. Ղ. Մ. 400 ղր., Ղ. Ց. 400 ղր., Զ. Բ. 250 ղր., Ընկ. Ս. 400 ղր., Ա. Տ. Օ. 200 ղր., Ց. Մ. 150 ղր., Բ. Մ. Ս. 50 ղր., Ընկ. Ե. Զ. Ա. 500 ղր., Բ. Մ. Ս. 150 ղր., Ռ. Շ. 300 ղր., Մ. Ն. 120 ղր., Մ. Մ. 150 ղր., Գ. Բ. 100 ղր., Բ. Զ. 120 ղր., Ա. Տ. Մ. 100 ղր., Ց. Հ. 250 ղր., Գ. Տ. Ց. 200 ղր., Ա. Ց. 100 ղր., Հ. Ն. 70 ղր., Ա. Զ. 100 ղր., Ա. Խ. 50 ղր., Ս. Մ. 50 ղր., Մ. Ա. ընկ. 60 ղր., Խ. Տ. Զ. 100 ղր., Գ. Խ. Ա. 70 ղ., Ա. Ա. 150 ղ., Ոճ 200 ղր. Խ. Մ. Ա. 200 ղ., Մ. Պ. 50 ղ., Ե. Բ. 100 ղ., Ա. Գ. 100 ղ., Խ. Տ. Ց. 150 ղր., Ընկ. Ղ. 100 ղ., Ա. Ա. 400 ղ., Թ. Ա. 200 ղ., Ա. Փ. 120 ղ., Անյայտից 50 ղ., X-ից 15 ռուբլի, „Խանդ“ խմբից Սք.-ի միջոցով 100 ռուբլի։

Վիշապ քաղաքի Կեդր. ընդուկի մէջ ստացուած են.

Զէյթունցի 30 դահեկան, Օ. 5 դհ., Ե. 5 դհ., Անծանօթ 5 դհ., Պարոն 20 դհ., Ելպիս 10 դհ., Կարին 1 նապոլէօն և 1 ֆունտ ստերլինգ, Գիսակ 40 դհ., Աղգասէր Ճ. 10 դհ., Պարտաճանաչ 200 դհ., Սէրունի 10 դհ., Պարոյր խ. 70 դհ., Զիւն 20 և 20 դհ., Ներսեհ 10 դհ., Ապահունի 5 դհ., Սէր 20 դհ., Հրազէն խ. 399 դհ., Փարոս խ. 216 դհ., Կեռաս 10 դհ., Հրազէն խ. 399 դհ., Փարոս խ. 216 դհ., Կեռաս 10 դհ., Ցառաջադիմասէր խ. 100 դհ., Հայրիկ 108 դհ., Գարի 10 դհ., Ցորեն 20 դհ., Ոճ 20 դհ., Ղ. Ստեփան 10 դհ., Հայուհի 18 դհ., Մկնիկ 20 դհ., Պոհտան 10 դհ., Կրակ ու բոց 40 դհ., Լապտեր 100 դհ.,

---

Խնդրում ենք ծրարի վրայ գրել մեր հասցէներից միայն մէկն ու մէկը։

***

Նորից խնդրում ենք հասցէները գրել խիստ որոշ ու պարզ։ Այլապէս մենք ստիպուած ենք անբաւարար ու անպատասխան թողնել շատերին, որովհետև հասցէները անընթեռնելի են։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նիւթատուութեան հասար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։

№ 6 20 ՓԵՏՐԻՍ 1896

ՀԱՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ԱՄԲՈԽԻ ԴԵՐԸ

II

Մենք միշտ գործ ենք ածում „մահմեդական ամբոխ“: Բայց մահմեդական ամբոխի վրայ ընդհանրապէս կարելի էր նայել սրանից մի քանի դար առաջ: Այժմ նրա կեանքը բաւականաչափ բարդացել է և նրա մէջ առաջացել են տարբեր խաւեր, որոնք ունին իրենց որոշ առանձնայատկութիւնները ու ձգտումները և որոնք, բնականաբար, տարբեր կերպով պէտք էր վերաբերուէին դէպի հայերի կոտորածը: Բայց նախ քան այդ տարբերութեան մասին խօսելը, ընթերցողի ուշադրութիւնն ենք դարձնում մի հանգամանքի վրայ: Զբնայած, որ լոյսի պէս պարզ է, որ վերջին շարժումները լոկ քաղաքական բնաւորութիւն ունէին, որ նրանք նախագծւում էին սուլթանի ձեռքով և նպատակ ունէին ահաբեկել գլուխ բարձրացրած հայ ժողովուրդը, բայց և այնպէս մեր մէջ զարմանալի յամառութեամբ շարունակում են տեղի ունեցած ընդհարումներին տալ կրօնական կերպարանք և ամբողջ մեղքը ձգել մահմեդական մոլեռանդութեան, զուրանի, սոֆտաների վրայ և այլն: Դեռ դրանք չեն ուզում տեսնել, որ այս դէպքում, ինչպէս և մարդկային ամբողջ պատմութեան մէջ, կրօնը եղել է մի քօղ, որի տակ պատսպարւած առաջ են տարել ամէն տեսակ անձնական շահեր և կեղտոտ միտումներ: Մինչդեռ կան ակնյայտնի փաստեր, որոնք պէտք էր խախտէին այդ հինաւուրց համոզումը: Ցաճկահայաստանում բացի հայերից ապրում են և ուրիշ քրիստոնեաներ: Ինչո՞ւ եւրոպացիք ազատ մնացին, ինչո՞ւ ասորիներին չմոտեցան, ինչո՞ւ վերջապէս ամենայն հոգատարութեամբ ու խնամքով պատսպարում էին յոյներին, որոնք մի քանի տեղեր այնքան էին լքբացել կառավարութեան փաղաքշանքներից, որ զզւանք էին պատճառում բոլորին: Դրա հակառակ մի քանի տեղեր իրենք՝ մահմեդական հոգևորականութեան ներկայացուցիչները՝ շեյխերն են նախաձեռնող հանդիսացել հայերի պաշտպանութեան, ինչպէս օր. Ղարաբիլիսա, Իզվերան:

Գալով մահմեդական ամբոխի տարբեր խաւերի խաղացած դերերին, տեսնում ենք, ինչպէս և հարկաւոր էր սպասել, որ ամենաքիչ մասնակցութիւն ունեցաւ տաճիկ գիւղացի երկրագործ դասը: Ցարձակողները գլխաւորապէս լեռնաբնակ անասնապահ կամ կիսաերկրագործ ազգաբնակութիւնն էր՝ քրդերը, լազերը և Ռուսաստանից գաղթած չերքէզները, իսկ երկրագործ դասը շատ շատ հետևել է նրանց՝ թալանից բաժին ձեռք ձգելու համար, իսկ գլխաւորապէս կամ անտարբեր են մնացել, կամ թէ,—որքան էլ դա զարմանալի թւայ,—պաշտպանել է իր դարևոր հարևան հայ ազգաբնակութիւնը և սաստիկ ընդդիմադրութիւն է ցոյց տուել յարձակողներին: Բացի այդ, պաշտպանութիւն են ցոյց տուել մի քանի տեղ արհեստաւոր և վաճառական դասը: Աւելի անսպասելին այն է, որ քրդերը, այդ հայերի անհաշտ համաբուած թշնամիները, նոյնպէս պաշտպանել են:

Ընթերցողը կը համաձայնի, որ այսպիսի ժամանակ անհնար է շատ փաստեր հաւաքել, բերենք մեր ձեռքի տակ ունեցածները:

Հասան-Ղալան *), Կարնոյ մօտ գտնւած կան, գիւղը, Բասենի Ամրագոմը, մասամբ Իզվերանը, Ալաշկերտի Ղարաքիլիսան, Բայազէդը, Երզնկայի, Խնուսի մի քանի գիւղերը պաշտպանւել են տեղական մահմեդականների շնորհիւ, Նարիմանի գիւղերը պաշտպանւել են շնորհիւ Էմին աղայի, Ռուսաստանից գաղթած՝ Խասթուր—Մուստաֆա աղի տղերքի:

Խալլու, Ամար, Խայաբեկ, Իրից գիւղ՝ պաշտպանել է զելանցի Սելիմ փաշան:

Ի՛չքիլիսէի ս. Յովհաննու վանքը և իր շրջակայ գիւղերը՝ Զուլան, Ղարաբաղար, Վանքի գիւղ, Ղումլուպուճաղ, Բօդին պաշտպանել է հայդարանցի Մուստաֆա բէկը: Բացի այդ, պաշտպանութիւն են ցոյց տուել Միրվա աղէն, Նաբի աղէն:

Նոյն իսկ Կարնոյ մէջ, որտեղ կառավարութիւնը հոգևորականութեան հետ միասին տարիների ընթացքում գրգռում էին տեղական մահմեդականներին, որտեղ էր այդ ժամանակ բոլոր կոտորածների հերոս՝ Շաքիր փաշան, ուր ամենից սաստիկ պէտք էր արտայտ-

*) Հասան-Ղալայի վանքը, որ աւերւել ու թալանւել է, գտնւում է Հասան-Ղալայից մէկ ու կէս ժամ հեռաւորութեան վրայ:

ւէր տաճիկների կատաղութիւնը, ազգաբնակութեան մի մասը, գլխաւորապէս վաճառական և արհեստաւոր դասը, հեռու պահեց իրեն կոտորածից։ Մինչև իսկ բազմաթիւ հայեր պատսպարեցին տաճիկների մօտ կոտորածի ամենախիստ ժամանակը։

Մենք արդէն սպասում ենք ընթերցողից զանազան առարկութիւններ և վերոյիշեալ պաշտպանների վարմունքի համար բացատրութիւններ։ Մենք էլ շատ լաւ գիտենք, որ մի տեղ ազգաբնակութիւնը երկիւղ է կրել „ռուսաստանցի“ հայերից, որոնց հետ ընդհարումներ է ունեցել և որոնց վրէժխնդրութիւնից տեղիք ունի երկիւղ կրելու, մի ուրիշ տեղ նա դողալով է յիշում ռուսական արշաւանքը, երրորդ տեղում աւելի հեռատես գտնուելով, մտածում է ապագայի մասին, հաւատացած լինելով, որ իրերի դրութիւնը անշուշտ կը փոխուի, չորրորդ տեղում զգում է, որ հայերի հետ կապուած է սերտ կերպով, տնտեսական շահերով, հինգերորդ տեղում հայերը այս կամ այն բէկի մարաքաներն են և այլն... Այս բոլորը մենք շատ լաւ գիտենք, մենք ոչ մի բոպէ թոյլ չենք տալ մեզ մտածելու, որ այդ զանազան Մուստաֆաները կարող են դէպի հայերը մի առանձին պլատօնական սէր տածել։

Մեզ համար առանձնապէս նշանակութիւն ունի այն, որ իրերի այս խառը դրութեան մէջ, երբ կառավարութիւնը ինքն է մղում մահմեդականներին դէպի կոտորած, դէպի թալան ու աւերում, երբ նա ինքն է ամբոխի առաջն ընկնում և իր մարտիններով նրա համար ճանապարհ հարթում, երբ այդքան նպաստաւոր պայմաններ է ստեղծում կիսավայրենի ամբոխի գազանական կրքերի անարգել կերպով դուրս ժայթքելու համար, այդ տգէտ, մոլեռանդ, ֆանատիկոս ամբոխի մի մասը կարողանում է ի նկատի առնել զանազան հանգամանքներ, չտարուել հոսանքով, զսպել իր կրքերը և մինչև իսկ դիմադրութիւն ցոյց տալ կառավարութեան ոտնձգութիւններին։

Դա պարզ ապացոյց է, որ ազգաբնակութեան մի մասը արդէն նկատում է շահերի այն անհամերաշխութիւնը, որ վաղուց ի վեր գոյութիւն ունի սուլթանի և իր բոլոր հպատակների մէջ, բայց որը մնում էր մինչև այժմ խորին մթութեան մէջ, շնորհիւ սուլթանի և տիրապետող տարրերի համերաշխ գործունէութեան։

Նա նկատում է այն տնտեսական կապը, որով կապուած է իր հարևան հայերի հետ և որի ահագին նշանակութիւնը նա ընդունակ է դարձել գնահատել։

Վերոյիշեալներից մենք տեսանք, որ վերջին եղերական կոտորածների մէջ մահմեդական ամբոխի դերը բոլորովին երկրորդական էր, մենք տեսանք, որ նրա մի մասը դուրս է եկել մասամբ տգիտութեան, խաւարի, անգիտակցութեան մթնոլորտից, սկսել է մտածել, հասկանալ իր իրական շահերը. և մենք սրտանց ողջունում ենք նրա այդ առաջին և դժուարին քայլը։

Բ.

ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

ՆԱՄԱԿ...

20/1 փետրուարի

Կը յուսամ թէ գրածս ստացած կը լինիք։ Տիրող ձմերուան, ձերբակալութիւններու, կոտորածներու, թիւրք կառավարութեան յարաբերութիւնները խզելու համար ձեռք առած արտաքոյ կարգի խստութիւններու և ճանապարհներու անապահովութեան պատճառով հնար չեղաւ ոչ ինձ և ոչ ուրիշներուն Ուշնիայէն գրութիւն մը կամ տեղեկութիւն մը ստանալ մինչև ցայսօր, բացի նոյեմ. 24 թուակիր գրութենէն, զոր յիշած էի արդէն։

Ինչպէս որ լսած կը լինիք, ասկէ առաջ թիւրք կառավարութեան կողմանէ ուղարկուած մարաշցի հինգ հայ պատգամաւորաց ձեռքով սուլթանը իր նպատակին չհասնելով, Հալէպի հիւպատոսները լիազօր պատուիրակութեամբ գնացած են Զէյթուն՝ հայերը զինաթափ ընելու և կառավարութեան ու անոնց մէջ հաշտութիւն կայացնելու նպատակաւ. բայց թէ այս միջնորդութեան արդիւնքն ի՞նչ եղած է, հայերը յանձնառու եղա՞ծ են թէ ոչ, կամ ի՞նչ պայմաններ կառաջարկուին երկկողմանի, ոչ ոք ոչինչ չգիտեր նաև այս մասին, չնայելով, որ ետևէ ետև սուրհանդակներ կը հանուին դէպի Ուշնիա։ Իրաց այս վիճակին մէջ ուղղակի Զէյթունէն եկող լուրերէ զուրկ լինելով, ստիպուած եմ երկրորդականներուն իսկ կարևորութիւն տալ։

Օտարազգի քրիստոնէի մը նամակէն հետևեալ տեղեկութիւններն առնուած են.—Հալէպի նախորդ կուսակալ Մէխմուտ փաշան հայոցմէ հինգ հազար ոսկի կաշառ ուտելով, Զէյթունը պաշարող զօրքերուն այնպիսի տեղափոխութիւններ կատարել տուած է ի նպաստ հայոց, որ զէյթունցիները յաջողած են մեծ քանակութեամբ պաշար մտցնել ներս, միշտ սխալ հեռագրեր ուղղած է պալատին՝ թէ Զէյթունն առնուած է, թէ ապստամբները ջարդուած են և այլն, մինչդեռ այն օրը, որ մեծ ճակատամարտ մը տեղի ունեցեր է հայոց և տաճկաց մէջ, երկու հազար եօթ հարիւր հոգի թշնամուց և երկու հարիւր յիսուն հոգի հայոց կողմէն կորուստ եղած է։ Կուսակալը կատարելապէս հակառակը հեռագրած է, որով սուլթանի կառավարութիւնը խաբելով՝ չէ կարողացած ժամանակին հարկ եղող զօրութիւնը կեդրոնացնել հոն, այսպիսով զէյթունցիները յաջողած, զօրքերը ջարդած և այս չափ երկարատև ժամանակ դիմադրել կարողացած են. իւր կաշառակերութիւնը հաստատող գրութիւն մը բռնած է իւր ստորագրութեան տակ և այժմ զինուորական

հսկողութեան ներքև կը գտնվի եղեր։ Նամակագիրը աւելցուցած է նոյնպէս, որ Զէյթունը պաշարող զօրքերը անօթի և խիստ անպատսպար վիճակի մը մէջ կը գտնուին, որմէ փորհարութիւն յառաջ գալով՝ օրական երեսուն հինգից մինչև քառասուն հոգի կը մեռնին. տեղացող յորդառատ անձրևներէն՝ վրաններն տարուած և պաշարնին թրջուած է այն աստիճան, որ ուտելու վիճակէն դուրս եղած է. զօրքերէն շատերը չդիմանալով այս խեղճութեան, կը փախչին բանակէն։

Ուրիշ նամակ մ'ևս, որ Հայու մը (իբր ականատես) բերանացի տեղեկութիւններուն վրայ հիմնուած է, կը գրէ թէ՝ „թիւրք զօրքերը յաջողած են գրաւել Փքոնուզը երկարատև արիւնռուշտ կռիւ մը վերջ. ապաստանեալներէն ոմանք յաջողած են փախչել Զէյթուն, իսկ մնացեալները ջարդուած և տները, եկեղեցին ու վանքը կողոպտուած ու այրուած են. թուրք զօրքերը յառաջացած են մինչև Ուլնիոյ զօրանոցը, իսկ հայերը ապաստանած են Աստուածածնայ վանքին մէջ, զոր չորս կողմէն ամրացուցած են պատնէշներով։

Թէ որչափ ստոյգ են այս լուրերը՝ չէ կարելի երաշխաւորել։ Դժբախտութիւն մ'է այս, որ ճիշտ լուրերու չգոյութեան պատճառով, այսպիսի երկրորդականներուն իսկ ժամանակ տալու և ձեղ հաղորդելու ստիպուած եմ։ Իմ կարծիքով, ինչպէս առաջին, այնպէս ալ երկրորդ նամակագրին տեղեկութիւնները հեռի են ճշմարտութենէ։ Եթէ թիւրքերը այդ աստիճան յաջողութիւն մը գտած ըլլային, ինչպէս երկրորդը կըսէ՝ սուլթանը երբէք չպիտի համաձայնէր հիւպատոսներու միջամտութեանը։

Մի այլ տեղեկութիւն ալ կըսէ, թէ յունուար 15/27-ին հիւպատոսները մտան Զէյթուն, գետեղերքը վաթսունի չափ խեղդուած զինուորներու դիակներ տեսան. կառավարութիւնը ամեն ճիգ ի գործ դրաւ այս գործը հայոց վերագրելու։

***

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

(ՀԵՌԱԳԻՐ Կ. ՊՈԼՍԻՑ)

—

Փետր. 17-ին.—Զէյթունի խնդիրը վերջացաւ։

Անձնատուութեան պայմաններն են.—Ընդհանուր ամնիստիա (ներում), ապստամբութեան մասնակցած օտարականների արտաքսումը Թիւրքիայից, ապստամբների և մի որոշ ըայօնում ապրող մուսուլմանների պատերազմական զէնքերի յանձնումը և վերջապէս մի քանի ըէֆօրմների ներմուծումը։

ԺՈՂՈՎՐԴԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽՄԲԵՐԸ

—

Ընդհանուր կոտորածի լուրը նոր չէ։ Դեռ մի տարի առաջ, երբ Հայկական հարցը բարձրացրել էր իր գլուխը և վրդովում էր իւրաքանչիւր բոպէ սուլթանի հարեմական անդորրութիւնը, երբ դիպլոմատիայի հետ ձեռք ձեռքի տուած երկար ժամանակ հարցը ձգձգելուց յետոյ անկարելի եղաւ խաբել հայ ժողովուրդը, երբ մասնակի խստութիւնները, բանտերը, աքսորավայրերը, կախաղանները... փոխանակ պակասեցնելու յեղափոխականների թիւը, փոխանակ ահ ու սարսափ տարածելու ժողովրդի վրայ, աւելի գրգռեցին, աւելի զարգացրին նրա յեղափոխական ոգին, այս բոլորից յետոյ՝ սուլթանին մնում էր միայն մի միջոց՝ ահաբեկել համայն հայ ժողովուրդը միանգամից մի ընդհանուր կոտորածով։ Միջոցը երկայրի սուր էր, բայց քանի որ սուլթանը տեսնում էր, որ այդպէս ընթանալով անշուշտ կը զրկի Տաճկահայաստանի նման արդիւնաւէտ երկրից, նրա տոկուն, աշխատասէր, չարքաշ ժողովրդից, ընտրեց երկու չարիքից փոքրագոյնը։ Նա այդպիսով յոյս ունէր, եթէ ոչ վերջնականապէս օձիքը թափտալ այդ չարաբաստիկ հարցից, ազատուել իրեն հալածող յեղափոխականների ուրուականներից, գոնէ ժամանակաւորապէս լռեցնել հայերի ձայնը և մի առ ժամանակ ձգձգել Օսմանեան պետութեան խղճալի գոյութիւնը։ Մինչև այդ բոպէն գուցէ ինքն էլ մեռնի, իսկ իրենից յետոյ, ինչ լինելու է, թող լինի։

Իւր նպատակների համար ամենալաւ զէնք կարող էր ծառայել տգէտ, մոլեռանդ, իր սեփական շահերը չըհասկացող մահմեդական ազգաբնակութիւնը, որին կարելի էր զինել ապստամբ հայերի դէմ։ Դեռ անցեալ տարի, նկատելով նրա նշանները, մենք զգուշացրինք մեր հասարակութեանը, փաստերով ցոյց տալով, որ հայ ժողովրդեան ընդհանուր կոտորած է սպառնում։ Անհրաժեշտ համարելով մահմեդական ամբոխի աչքերը բանալ, մենք միաժամանակ հրաւէր կարդացինք հայ հասարակութեան, անդադար „զէ՛նք, զէ՛նք գոչելով"։ Զէնք էինք պահանջում ոչ թէ միայն յեղափոխական գործն առաջ տանելու, այլ և ժողովրդի ինքնապաշտպանութեան համար էր։ Հասարակութիւնը անզգայ, պօռոտախօս, անձնական նեղ շահերի սահմանից դուրս չելող հասարակութիւնը հարկաւոր ուշադրութիւնը չդարձրեց մեր կոչի վրայ, սառն անտարբերութեամբ նայեց հայ ժողովրդի տագնապալից դրութեանը և բաւականութիւն չտուեց նրա օրէ օր աճող զէնքի պահանջին։

Կոտորածը եղաւ, և ի՞նչ ենք տեսնում մենք այժմ։ Այնտեղ որտեղ Դաշնակցութիւնը զէնք էր բաժանել, որտեղ զինավարժ մարդիկ էր պատրաստել կամ հայդուկային խմբեր էր պահել, այնտեղ ժողովուրդը կամ բոլորովին անվնաս է մնացել, կամ թէ համեմատաբար շատ քիչ է վնասուել։ Յիշենք այստեղ մի քանի փաստեր Կարնոյ շրջակայ գիւղերից և գաւառներից։

Ա. Հարուստ և բազմամարդ գիւղի բնակիչները իմանալով, որ շրջակայ գիւղերն աւերուում են լազերի, չերքէզների ձեռքով, գիշեր, ցերեկ պահապաններ նշանակելով՝ հսկում են, որպէս զի անակնկալ կերպով չբռնուին։ Լազերը և չերքէզները մօտենում են ահագին բազմութեամբ, բայց գիւղից գնդակների մի այնպիսի կարկուտ են թափում անկոչ հիւրերի գլխին, որ նոքա վայրկենաբար փախուստ են տալիս։ Փախչողները նորից վերադառնում են աւելի մեծ բազմութեամբ, յար-

ձակումը կրկնուում է 5 անգամ և իւրաքանչիւր անգամ թշնամին մեծ ամօթով յետ է փախչում։

Բ. և Գ. գիւղացիք միանում են և հայդուկային խմբի օգնութեամբ յետ են մղում քրդերի յարձակումը։

Դ. գիւղը նոյնպէս առաջին օրը քաջաբար պաշտպանուում է։ Երկրորդ օրը զօրք է մտնում գիւղը „պաշտպանութեան“ համար։ Զօրքի հետ մտնում են և քրդերը, որոնք զօրքի հեռանալուց անմիջապէս յետոյ սկսում են գիւղի կոտորածը և թալանը. սպանում են 6 մարդ։

Ե. գիւղը հերոսական կռիւ է մղում։

Քրդերը հարեւան գիւղը աւերելուց յետոյ մօտենում են այդ գիւղին։ Այդ տեղ է լինում Դ-ն հայդուկային խմբի մի մասը։ Կռիւը սկսւում է լուսաբացին։ Քրդերը, 2000-ից աւելի, յարձակւում են ամեն կողմից միաժամանակ, բայց զարմանքով ամեն կողմից էլ հանդիպում են գիւղացիների և խմբի արձակած փնտակներին։ Քրդերը նամուսի են գալիս, որ մի հայ գիւղ յանդգնում է դիմադրել իրենց բազմութեան, կրկնում են յարձակումը, դարձեալ ապարդիւն։ Ճարահատ քրդերն այն աստիճան նեղ տեղն են ընկնում, որ օգնութեան են հրաւիրում իրենց թշնամի ցեղերը, առաջարկելով նրանց միացեալ ուժերով այդ գիւղը քանդել և ապա դարձեալ շարունակել իրենց թշնամութիւնը։ Գիւղացիք նկատելով այդ և լաւ հասկանալով, որ որքան շատ մնան պաշարուած դրութեան մէջ, այնքան վատ կը լինի իրենց դրութիւնը, վճռում են իրենք յարձակողական դիրք բռնել։ Մի քանի կըտրիչներ դուրս են գալիս գիւղից և քրդերի գնդակների տակ յաջողութեամբ հասնում են ջրաղացին, այն տեղ ամուր դիրք են բռնում և սկսում հրացանաձգութիւնը։ Հենց առաջին անգամից 3 քիւրդ են գլորւում։ Այս անակնկալ դէպքից շփոթուած՝ քրդերը թողնում են և փախչում։

Ի միջի այլոց քրդերը պատրաստելով մի բլրի գլուխին տեղ բռնել, նախօրէն ցանկանում են իմանալ հայերի հրացանների ոյժը և հրացանաձիգների ընդունակութիւնը։ Այդ նպատակաւ բլրի գլուխը մի հէշ են բարձրացնում, որն իսկոյն գլորւում է հայդուկների մէկի գնդակից։ Ապշած քրդերը չեն համարձակւում գլուխ հանել բլրի ետեւից։

Զ. գիւղը, 30 տնից բաղկացած, առաջին օրը շատ լաւ էին պաշտպանուում. բայց յետոյ անկարող լինելով երկար դիմադրել թշնամուն, որը պէտք էր վերադառնար աւելի մեծ ուժով, անձնատուր է լինում մի քիւրդ ցեղապետի, որը խոստանում է նորան պաշտպանել միւս քրդերի յարձակումից։

Է. գիւղը։ Երբ քրդերը յարձակւում են այդ գիւղի վրայ, այն ժամանակ այնտեղ լինում է մեր հայդուկային խումբերից մէկը, 15 հոգուց բաղկացած, Ս-ի առաջնորդութեամբ։ Քրդերի երևալուն պէս տղերքը դուրս են գալիս գիւղից և պաշարում դիմադրութիւն չսպասող քրդերին, ստիպում են նրանց անձնատուր լինել, խլում են նրանց հրացանները և ճանապարհ գցում։

Ահա փաստեր, որ հաստատում են, թէ հայ ժողովուրդը զոհ է գնացել, որովհետև զուրկ է եղել ինքնապաշտպանութեան միջոցներից. ահա փաստեր, որ հաստատում են, եթէ մեր ժողովուրդը իր ժամանակին զինուած լինէր, եթէ յեղափոխականները իրենց տրամադրութեան տակ ունենային պահանջի համեմատ միջոց, այդ սարսափները հաւանականաբար կամ տեղի չէին ունենալ կամ չնչին կը լինէր։

Արդեօք օգտուելու ենք այս դառն դասից։ Կռիւը չէ վերջացած և չի էլ կարող վերջանալ. մենք միշտ սպասելու ենք նոր նոր սարսափների և որպէսզի ժողովուրդը դարձեալ զոհ չգնայ, որպէսզի նա կարողանայ իրեն պաշտպանել, և, վերջապէս, կուեալ վրէժխնդիր լինելու, կուեալ ազատութիւն ձեռք բերելու համար, անհրաժեշտ է շուտափոյթ օգնութեան գալ. բոպէն ծանր է ու վտանգաւոր, պաշտպանենք կուելով։

Բաղրատ

ՍԻՒՐՄԷՆԷԻ ԿՌԻՒԸ

—

Սիւրմէնէ կամ Սու-Արմէնէ Տրապիզոնի արևելահարաւային կողմն լեռնուտ գաւառ մ'է։ Աղգաբնակութեան մեծ մասը իսլամներէ կը բաղկանայ։ Հայաբնակ տեղերը գլխաւորաբար 5 բաժանմունք ունին, իրարմէ մէկ մէկ ժամ հեռաւորութեամբ.— Մաղթելայի ծոցը՝ Քութունոց և Քինասլի. Ալզաք-Տէրէյի մօտ Ժիւժք և Կատրաս, ասկէ ալ մէկ ժամ հեռու կիյնայ Էլէմանոս գիւղն (Եոմուրա), ասոնք ընդամենը մօտաւորապէս 90 տուն են, 800 բնակիչներով։

Այս լեռնականները, տարիներէ ի վեր իրենց ազատ գոյութիւնը պաշտպանելու համար շարունակ դիմադրած են տաճիկ աւազակաց վոհմակներուն։ Բուռ մը հայեր, իրենց վայելած տեղական դիրքին և ազատ ոգոյն շնորհիւ, կարող եղան սուլթանական կործանող հեղեղներուն և տասնեակ հազարաւոր կատաղի պաշիպոզուքներու հարուածներուն կուրծք տալ։ 1569-էն ի վեր Մուհամէտի կրակով բորբոքած բոլոր շէյխերուն ու մոլլաներուն ամեն ճիգերն, այս հայկական վերջին շառաւիղն ալ մթացնելու համար, մնացած էին ապարդիւն։ — Թողունք պատմականը։

Ասկէ 4-5 ամիս առաջ մէկ քանի անգամ յեղափոխական ասպատակախմբեր երևացին նոյն իսկ Տրապիզոնի շատ մօտերը։ Ասոնք „Դաշնակցութեան Տապարեան“ հայդուկախմբերն էին, որ իրենց համարձակ ուարագ գործունէութեամբ երբեմն անհետ կը լլլային և երբեմն ալ կերևային։ Կառավարութիւնը գիւղ ու քաղաք լրտեսներով, ոստիկաններով լեցուց, սակայն ամեն ձեռնարկ անհետևանք մնաց. թէև տեղական կառավարութիւնը փրփրած էր, բայց ի՞նչ ընէր, քանի որ Համիդը դեռ հայերը կոտորելու հրամանը չէր արձակած։ Պաշտօնեաներ և մուխթարներ ճարահատ, իբր մի ուրիշ և արմատական դարման՝ յայտնեցին, թէ ոևէ կերպով գիւղացի հային և մանաւանդ սիւրմէնեցի հայերն պէտք է ոչնչացնել։ Եւ ահա սեպտ. 26-ի որոշուած օրը լայն ճանապարհ կը բանայ իրենց փափաքներն իրագործելու։

Սիւրմէնէի գայմագամն արդէն վալի Գադրի պէյին նախապէս հրահանգուած, սկսաւ գիւղերն մտնել

զէնք ցուցել գաղտնի կերպով և տեսակցիլ սոֆթաներու և աւազակներու հետ։ Հազիւ վալին գիւղերէն վար իջաւ, տաճիկներն ամենայն համարձակութեամբ ձեռք առին իրենց պապերէն աւանդած չարագործութիւններն։ 1895 թ. սեպտ. 20-ի դիշերը, ժամը 9 և 43 րոպ. (ըստ Թուրք.) պուրնուխցիք և մօտակայ տաճիկ գիւղացիներու 300 հոգիէ զինեալ խումբը յարձակում գործեց Ծիւժքի վրայ, հայերն կարողանալով շուտ մը դուրս նետուիլ, անտառներէն դիմադրեցին, և մինչև առաւօտ արգիլեցին կողոպտել իրենց տները։ Խուժանը տեսնելով, որ բան մը պիտի չկարենայ ընել՝ շուտով միացաւ Իլիաս աւազակապետին, ախուցիներու, զաւակցոց, մարծուպեցոց, աղնացոց, կուկուտացոց և Ալայ զապտիէին ոստիկանական խմբին. այս ամենը, 1500-1600 հոգի, միահամուռ յարձակեցան Քինասլիի հայոց վրայ ու մէկ քանի հայեր ալ ողջ բռնելով, ուզեցին չարաչար սպանել։

Կանայք ու տղայք առանց շփոթելու դուրս եկան և պատրաստուեցան լաւ դիրք մը դրաւելու. ըուսինը կը փայլէր, ասոր հետ մէկ տեղ այր մարդիկ շուտ մը իրարու ձայն տալով՝ յաջողեցան գիւղին մուտքերը բռնել։

Մէյմնալ մօտակայ բլուրին վրայէն հայ մը անվեհեր ձայնով պոռաց ու ըսաւ՝ „ցաւութեամբ եկաք ասանկ դիշերով մեզ պաշարեցիք, սակայն, գիտցած եղէք, որ դուք ալ պաշարուած էք, եթէ ձեր բռնած հայերէն մէկուն կեանքին դպչէք, ձեզնէ ալ և ոչ մէկը ողջ կը մնայ“։ Ա ս սպառնալիքին վրայ քանի մը անգամ կրակ ըրաւ. իր միւս ընկերն ալ դիմացէն ձայնեց ու հրացան մը ալ անիկա արձակեց։ Տաճիկները կարծեցին թէ մեծ բազմութենէ մը պաշարուած են, շուտով քովերնին պահած հայերն թող տուին և „էրմէնիլար պիզի քրաճաքլար“ ըսելով՝ ծառերու կամ քարերու ետև պահըտեցան մինչև առաւօտ։ Նոյն գիշերը Տրապիզոնի վալիին լուր ղրկեցին, որ օգնութիւն հասցնէ. ըսելով որ հայերն ոտքի ելան դէպի Տրապիզոն, այնպէս որ քաղաքը իրար անցաւ ու տարօրինակ պատրաստութիւններ ու սպառնալիքներ տեղի ունեցան։ Տաճիկներն տեսան որ բազմութիւնը չերևաց, յուսախաբ ապշած մնացին։—Բայց անտառներէն ատեն ատեն հրացանի որոտումներ կը լսէին։ Շուտով վրայ հասան լազ—մախելացիք, զանեկեցիք, խարեցիք, փիրկերէցիք, անճան-մեսխորցիք, օծձիք և այլ գիւղացիներ, ամենը մօտ հինգ հազար հոգի, հազարի մօտ ալ „ջորիի պաշտօն“ կատարող տաճիկ կանայք։ Այսքան բազմութիւն, դարձեալ չհամարձակեցան անտառներու վրայ քալել։

Աւազակապետ Իլիասը ասոնց մէջէն հարիւր կուռղ ընտրելով՝ յաջողեցաւ առաջ անցնել. երիտասարդ Մարկոսեան Սարգիսը միայնակ ըլլալով հանդերձ՝ սկսաւ կրակ ընել. դիւցազնաբար կուռեցաւ մինչև վերջին ոյժը ու այնպէս սպանուեցաւ։ Վայրենիները քանի մը կիներ ու երեք աղջիկ ձեռք անցուցին, նոյն իսկ այս քաջ Սարգիսին տասը տարեկան աղջիկը լլկեցին, Մարկոսեան Ցարութիւնին կնոջ դրկի մէկ տարեան աղջիկը և ուրիշ մանչ տղայ մը ժայռերէն վար գլորեցին։ Այլևս առաջ չկարողացան գնալ, ինչու որ մեծ ու պզտիկ կատաղի կերպով կուռեցան ու վռնտեցին զանոնք։

Միւս կողմէն ախուցիներու ուրիշ խումբեր Բուլթուռնոց թաղը պաշարած ըլլալով, տեղացոց մէջոց չուրն պաշտպանողական դիրք բռնելու. առաջին անգամն որ Կարապետ Եազճեանը դիմադրելու կը պատրաստուէր, շուտով սպանուեցաւ. մնացածներն ալ ստիպուած գլուխ ծռեցին ու կողոպտուեցան։

Առաւօտը դեռ հազիւ ելած էր Ճաւտար-Ալին, անծերցի Քէօր Պոզոն, իր եղբայր Քիպարն, կուկուտացի Զափանոզլիներն և Զօլաղ Խմայիլը, ինչպէս և կառավարչական պաշտօնեաներ, իրանց խումբերով այս մոլեռանդ ամբոխն առաջնորդեցին դէպի Կատրաս և Էլէմէնոս։

Այս գիւղերուն վրայ 2000 քայլի չափ հեռուէն սկսան կատաղի կերպով կրակ տեղացնել. արք և կանայք շտապեցին անտառներն անցնել. երբ խուժանը աւելի մօտեցաւ գեղին, հայերն այն ատեն հրացան արձակեցին։ Չորս հոգի ալ առանձին առանձին տեղերէ կրակ ընելով թշնամին շփոթեցուցին։ Տաճիկները միակերպ դիմադրութիւն տեսնելով, ամեն կողմ լուր ղրկեցին, որ օգնութեան հասնին։ Քիչ ատենէն եկան՝ Զազանա-Կինէի, Օղուզի, Գօշայի, Զիմշախայի, Խարայի, Արսէնի, Լիկինէի, Ծիծրայի, Գոճապայի, Մեսոնայի և այլ աւազակ գիւղացիներն, առաջնորդութեամբ Գօջայի Ահմէդ Զապդիէյի և այլ ծպտած պաշտօնատարներու։—Այս չարագործներուն թիւը 10 000-էն անց էր։ Մեծ մասը մարթինի հրացաններով էին զինուած և երկու մաս բաժնուելով, մին Ծիւժքի և Քինասլիի, միւսն ալ Կագրաս և Էլէմէնոսի տներն սկսան աւարի տալ։

Այս մահմեդականներն Էլէմէնոսէն միայն Մարտիրոս Ավճեանց ձեռք ձգելով սպաննեցին, միւսներն աւելի բարձր ապառաժներու վրայ տեղաւորուեցան։ Բարբարոսները ամեն ինչ թալանելէ և իրենց կանանց բեռցնելէ վերջ, մոռցեցին խարգախութեամբ ձեռք անցնել հայերին, ուստի առաջարկեցին, որ գան անձնատուր ըլլան և իրենց կեանքին բնաւ չեն դպչիր։ Հայերն ալ հեգնական ու խրոխտ պատասխան տուին՝ „վատեր, եթէ կարող էք, զէնքով մեզի հետ խօսեցէք ճակատ առ ճակատ“։

Ասոր վրայ Ճաւտար-Ալին 200 հոգի ընտրելով, քալեց վրանին։

Մերոնք ըսին՝ „եկէք, եկէք քաջութիւնը հոս, հիմա յայտնի պիտի ըլլայ“ ու սկսան կրակել։ Թշնամիները շուտով ետ փախան և ուզեցին բարկութիւننին Կատրասի եկեղեցւոյ ու դպրոցի վրայ թափել։ Դռները կոտորելով ամեն ինչ աւերեցին, կողոպտեցին. սուրբ Սեղանին և Մայր Աստուածածնայ պատկերին վրայ պզտծեցին, ժամագրքերը կոտրեցին, այրեցին. վերջապէս մինչև սեպտ. 30-ին ամեն ինչ տակն ու վրայ ընելէ վերջ, քալեցին Բաբերդի վրայ։ Մեր լեռնականներն այնքան ատեն նօթի, ծարաւ կուռելէ վերջ, երբ տեսան, որ թշնամիները հեռացան՝ տուներնին իջան, բայց ո՛չ ուտելիք, ոչ հագնելիք և ոչ մէկ բան գտան։—Կառավարութիւնն ալ, առանց ժամանակ կորսնցնելու, ոստիկաններով այս յոգնածներուն գլխին ծանրանալով, զէնքերնին պահանջեց, ըսելով՝ „Այլևս ասանկ դէպքեր չըպատահիր, հանգիստ եղէք, եթէ դուք զէնք չունենաք, մենք ալ ձեր վրայ կասկած չենք ունենար“։

Զբաւորութիւնը և այլ սպառնացող չարիքներ կարողացան այս ուժասպառ քաջերու ձեռքէն զէնքերն առնել։

Հիմա Սիւրմէնէի բոլոր Հայերը ուտելու պատառ մը հաց չունին։ Այն ազատ արծուի պէս ապրողներն՝ ա՛լ ի՞նչպէս կարող են ցած թռչին գլուխ ծռել և տանել ցարդ չտեսած դառնութիւններն.

Տաճիկ աղաներն ու պաշիպոզուկները տեսնելով, որ Հայերն անզէն մնացին, սկսան ասոր անոր վրայ յարձակիլ ու սպաննել։

Նոյ. 18-ին կուկուտացիներու և պուրտուքցիներու աւազակ գիւղացիներու քաջութիւնը նոր արթնանալով, խումբ-խումբ սկսան միւսներու պակաս թողուցածները լրացնել. ի միջի այլոց Առաքելեան Յակոբի աղջիկը կտրտեցին։

Էլէմէնոս և մօտակայ Հայ գիւղերի մօտով անցնողի աչքին կիրնան սև մոխրի կոյտեր։ Ալ օճախներէն առաջուայ պէս ծուխ չբարձրանար, Հայ կորիւններու ուրա՜խ խաղի ձայներն, ոչխարներու մայիւնը, կովերու բառաչիւնը ալ չը լսիր, միայն խորին լռութիւն մը ամեն կողմ կը տիրէ։

Տաճիկներու միակ ցանկութիւնն է հիմա ջնջել Հայերուն հետքը և բոլորովին տիրել անոնց հողերուն, որ բնաւ դժուար չէ։

ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

—

ՍՂԵՐԴ

(1895 թ. հոկտ. 30, ժամ 3-9)

—

Հրէշ Համիդի հեռագրերը հասան գաւառներու ամենքէն յետ ընկած քաղաքներն ու գիւղերը, կատարեցաւ անոր հակամարդկային փափագը՝—կոտորել մարդիկը, կոտորել Հայերը, որովհետև անոնք կը յանդգնին ազատութիւն և անդորրութիւն պահանջել ու անոր անօրէն տնօրինութեանց դէմ բողոքել։ Հրէշը տեսաւ ու շօշափեց իր անկումը, ուստի շտապեց իր հաշիւը վերջացնել տառապած և մաշած Հայութեան հետ,—կոտորելով, բնաջինջ ընելով Հայ ազգը։ Ո՞ր գիւղը, ո՞ր քաղաքը մնաց առանց կոտորածի, ո՞ր Հայը անվնաս անցաւ Հալածանքներու այս բովէն.—ոչ ոք։ Սղերդն ևս, այդ արաբախօս խղճուկ Սղերդը ևս զոհ գնաց Հրէշ արիւնարբուին։

Հրէշ Համիդէն հեռագիր եկաւ Սղերդ, որով մարդակերպ գազանը կը հրամայէր կոտորել Հայերը։ Հեռագրատան մէջ կար Հայ պաշտօնեայ մը, մահտեսի Ադըմօ անունով, որ անձամբ ստացաւ հեռագիրը և տարաւ կառավարութեան, բայց ետքէն Հայ եղբայրներուն յայտնեց իրենց գլխուն գալիքը. Հայերը վախէն գոցեցին խանութները և փակուեցան տուներնուն մէջ։ Տաճիկ նենգամիտ կառավարութիւնը խաբեց Հայերը ըսելով՝ „թէ բան չկայ“ և սպանեց մահտեսի Ադըմօն և իր եղբայրը՝ Շաքրօն, իբրև ստախօսներ։ Հայերը բացին խանութները։

Հոկտ. 30-ն էր. բոլոր Հայերը շուկան էին. հանդարտ գործերով կզբաղէին։ Յերեկուայ ժամը 3-ին զինուորական փողը հնչեց և զինուորները՝ տաճիկներուն ու քիւրդերուն գլուխն անցած՝ յարձակուեցան Հայոց, ասորոց և բողոքականներու թաղին, խանութներուն վրայ, ջարդեցին, կոտորեցին սակաւաթիւ Հայերը, տուները և խանութները կողոպտեցին, աւարի առին ինչ կար չկար. տան դռներն ու պատուհաններն անգամ տարին, տուներուն շատը քանդրտեցին, ոչինչ չմնաց։ 100-էն աւելի Հայեր սպանուեցան, ինչպէս Խօջա Մինաս, Կորկիս Ապտալա, Սիմօ՝ Խչոյի որդին (բողոքական), Ադըմօ մահտեսի Իսէֆեան Լայլն. շատեր վիրաւորուեցան և ի լուսն ամենայնի, շատերն ալ բանտարկուեցան։ „Ոչ մէկ յանցանք չունինք, մեղքերնիս է, կըսեն, ինչո՞ւ ծնուեցանք, ինչո՞ւ կապրինք, աս է Հայուն յանցանքը“։ 50 տունի չափ վախէն անմիջապէս տնով տեղով տաճկցան, մահմեդական եղան, մանաւանդ Հարուստները՝—Պօղոս Ղարիպեան, մահտեսի Պօղոս Զիչիին մեծ, ահագին տունը, Կորկիս Ապտալլային եօթը զաւակները իրենց ընտանիքներով, Պապէ Յարութիւն Լայլն։ Եկեղեցին պղծեցին և ետքը մզկիթ դարձուցին, վարժարանը քանդեցին, ուսուցիչները և շատ աշակերտներ սպանեցին։ Հայերը անպաշտպան էին, ոչ զէնք ունէին և ոչ մէկ միջոց պաշտպանութեան։

Բայց հոս կարմիր գծի նման կանցնի տաճկաց ոմանց Հայերուն ցոյց տուած եռանդուն պաշտպանութիւնը. տաճիկներէն շատերը Հայերուն հետ անմիջական առևտրական յարաբերութեան մէջ գտնուելնուն համար չէին ընդունիր Հայերը կոտորելու սկզբունքը, որովհետև իրենց կեանքն ալ Հայուն կեանքին հետ կապուած էր, եթէ Հայերը վտանգուին՝ իրենք ալ վտանգուած կը համարուին, ադոր համար շատերը մեծ պաշտպանութիւն ցուցուցին Հայերուն։ Քանի մը տաճիկ ալ, ինչպէս Իպրահիմ, Նաթօր քաջ երիտասարդները, մեռան Հայերը պաշտպանելով։ Սղերդի աւերման և կոտորածի մէջ ժողովուրդը՝ ամբոխը մեղաւոր չէր, ան ոչխարականութեան օրէնքին հնազանդեցաւ. մեղաւորը տաճիկ կառավարութիւնն էր։ Թէև Հայ բողոքականներէն և ասորիներէն շատը սպանուեցան և Հայու վիճակին ենթարկուեցան, բայց կաթոլիկները անվնաս անցան վտանգէն, որովհետև տաճիկ կառավարութիւնը նախապէս պաշտպանութեան համար անոնց թաղը և նորաշէն եկեղեցին շրջապատեց զօրքերով, թէև ժողովուրդը կուզէր աւերել այդ եկեղեցին, որովհետև եւրոպացիք բռնութեամբ շինել տուեր էին։ Բէժիի պաշտօնեաներէն մէկը շատ Հայ ընտանիքներ պատսպարեց իր տանը։

Անմօթ տաճիկ կառավարութիւնը աւերումէն ետքը սկսաւ փնտռել կողոպտուած իրերը. բայց ո՞ր պիտի գտնէ։ Հիմակ Սղերդի մէջ Հային Հարուստն ու աղքատը մէկ է, անօթի, ծարաւ, մերկ, բոբիկ, շլարած և անորոշ վիճակի մէջ. շատերը մեռան սովէն և սոսկալի ցուրտէն։ Նախկին բազմանդամ բարեկեցիկ ընտանիքները այսօր տաճիկներուն ախոռներուն մէջ են տեղ գտեր, հագնելիք չունին, տուները աւերակ, նստելու, պառկելու տեղ, գլուխները դնելու քար չկայ, վառելիք չկայ, մանուկները հա՞ց կաղաղակեն, անոնց ձայնը լսող չկայ. Հայը դուրս ելլելու իրաւունք չունի, անպատճառ, է՛ն քիչը, պիտի ծեծի։ Բամազանի պատրաստութեան ատենը կուգայ, տաճիկ

տղաները կուգան Հայու տները կը մտնեն, բոլոր տախտակները, փայտերը կառնեն, որ Ղամազանին իրենց սովորական խարոյկին մէջ վառեն։ Օրը 10-15 հայ կը մեռնի ձմերուան սաստկութենէն. երևի. Սղերդի հայերը այս տարի դարուն էպիտի տեսնեն։

Շատ հայեր Պոլսէն, իրենց ազգականներէն դրամ ստացան, բայց կառավարութիւնը տուրքի փոխարէն գրաւեց, նոյն իսկ քանի մը գալիք տարիներու տուրքի փոխարէն։ Եւ այդ բաւական չէ, մէկ անգամ առնելէն ետքը, երկրորդ անգամ ալ կերթայ ըսելով՝ "եթէ առաջի անգամուն տուիր, հիմա ալ կրնաս տալ"։ Ի՞նչ ընէ սնանկացած տէրութիւնը, ի՞նչ կերպով և ինչո՞վ լեցուցնէ դատարկացած գանձը։

Եւ այս ըրաւ տաճիկ կառավարութիւնը, ինքզինքը „բարեխնամ" համարող չարախնամ անամօթ կառավարութիւնը։ Ա՛լ ասկէ ետքը վզերնիս ծռե՞նք տաճկին սուրին առջև, ա՛լ ասկէ ետքը անմռունչ ընդունի՞նք անոր տուած հարուածները.—Ո՛չ, երբէ՛ք, մեր և անոր մէջ բացուած վիհը անհուն է, կամ մենք պիտի ապրինք կամ ան. մահը տեսանք մեր աչքով, զգացինք անոր ի՞նչ ըլլալը, ա՛լ անկէց չենք վախնար. մենք կուխտենք Հայ յեղափոխութեան հետ ձեռք ձեռքի տուած գործել ի նպաստ տառապեալ Հայ ժողովրդին Սուրբ Ազատութեան,

Կեցցէ՛ Հայ Յեղափոխութիւնը, ան է մեր պաշտպանը, անով միայն կրնանք ազատութիւն ստանալ։

*
* *

Սղերդի շրջակայ գիւղերը սոսկալի կոտորածներ են տեղի ունեցեր, բայց ստոյգ լուրեր չկան։

ԱՐԱԲԿԻՐ

I

Հոկտ. 25-ին, դշ. օր, ժամը 9-ին քաղաքս պաշարուեցաւ հազարաւոր քիւրդերու կողմէ, որոնք, ինչպէս իրենք իսկ կը վկայէին, Արաբկիրի շրջակայ հեռաւոր ու մերձաւոր գաւառներէն մասնաւոր հրաւիրագրերով եկած էին քաղաքը կործանելու։ Ասոնց մէջ կը տեսնուէին տէրսիմցի, աղճադաղցի, մալաթիացի, արղաւանցի, աթիամցի, տիվրիկցի, մինչև իսկ զոչկերիցի քրդեր։ Այս վերջինը Շապին-Գարահիսարի մօտ գաւառակ մըն է։ Ասոնցմէ զատ կային նաև Արաբկիրի շրջակայ գիւղերէն Թուրքեր։ Ասոնք ամենը իրենց դրաստները և մարդիկը հատատեցին քաղաքին շրջակայ բլուրներուն ու տափարակներուն վրայ ու իրենք քանի մը կէտերէ յարձակեցան քաղաքին վրայ։ Հայերը թէև քանի մը օրէ ի վեր ահ ու սարսափի մէջ էին և գիտէին, թէ քաղաքին գլխուն մեծ աղէտ մը կը սպրդի, այդ պատճառաւ ալ երկու երեք օրէ ի վեր շուկայ յաճախելէ դադրած ու իրենց կրպակները մասամբ դատարկացուցած էին. բայց վտանգին առաջը առնելու անկարող էին։ Փախչելու դիւրութիւն ալ չկար։ Դէպքէն մի քանի օր առաջ քաղաքը շրջակայ գաւառներու գիւղերու հետ հաղորդակցութեան դնող բոլոր ճանապարհները բռնուած էին պահակ զինուորներու կողմէ, այնպէս որ ոչ միայն փախստականները, այլ կարևոր գործի համար քաղաքէն մեկնողները ետ դառնալու կը ստիպուէին։

Քիւրդերը տեղացի քաղաքաբնակ թիւրքերու առաջնորդութեամբ երբ յարձակեցան հայոց թաղերուն վրայ, այնպիսի սարսափ մը ձգեցին, որ հայերը թողին իրենց բնակարանները, ստացուածքը, կարասին ու փախան դէպի ուրիշ թաղեր։ Յարձակողները կը կողոպտէին տունները, աւարի տալով անոնց բոլոր պարունակութիւնները. զարդեղէն, անկողին, փռոց, պղնձեղէն, նպարեղէն, անասուններ և վերջապէս ամէն ինչ, զորս շալակելով կը տանէին կը հանէին քաղաքէն դուրս իրենց մարդոց գտնուած տեղերը, ուր շեղջաշեղջ կը դիզէին ու կը կուտակէին այդ բազմատեսակ հարստութիւնները։ Այսպէս ամէն կողմէ յարձակող հազարաւոր բազմութիւնը հետզհետէ մրջիւնի պէս տարածուեցաւ Արաբկիրի լայնատարած քաղաքին ամէն կողմերը, ձորերու, խիտ ծառաստաններու մէջ և ուրիշ հեռաւոր ու մենաւոր վայրեր գտնուած թաղերու, արուարձաններու և առանձին բնակարանաց վրայ, մտաւ ամէն ծակ ու ծուկ, աւարի տուաւ, երկու օրուան մէջ կողոպտեց ու դատարկացուց ոչ միայն հայոց 2000 տուները, այլ մեծ ու փոքր շուկաները, եկեղեցիները և մինչև իսկ վարժարանները ու առաջնորդարանը։ Տարաբաղդ հայ ժողովուրդը, որ խուժանին առջևէն միշտ խոյս կուտար, իր տունը ու ամբողջ հարստութիւնը անոնց յանձնելով, իր օձիքը չէր կրնար ազատել, վասն զի ամենուրեք կը կողոպտուէր, կը թալանուէր ու կը մերկացուէր իր քսակէն, իր վրայ ունեցած ոչ միայն արժէքաւոր նիւթերէն, այլ մինչև իսկ իր նոր զգեստներէն։ Աւարառուները այնքան մոլեգնեալ էին ընչաքաղցութեամբ ու ագահութեամբ, որ 2000 տուներու, երեք եկեղեցիներու և հարուստ մայր եկեղեցիին աւարներով չը գոհանալով, հետամուտ էին միշտ ձեռք ձգել կիներն ու օրիորդները և ասոնց թանկագին զարդերը կորզելու և յափշտակելու։ Տեսնուեցան շատ գազաններ, որ կիներուն ամենէն ծածուկ տեղերը պահուած ոսկեղէն զարդերը քաշեցին՝ հանեցին, և ուրիշներ, որոնք անոնց մետաքսեայ ու դիպակեայ ներքին զգեստները կողոպտեցին, թողլով այն ամօթիսած արարածները ադամային մերկութեան մէջ։ Աւարառուները, որոց բազմութեան թիւ ու համար չըկար, մէկ տուն մը երեք չորս և աւելի անգամներ կայցելէին կողոպտելու, վասն զի ամենէ վերջ եկողն ալ բան մը կը գտնէր տանելու. նոյնպէս ամէն կին կը կողոպտուէր մէկէ աւելի անգամներ զանազան մարդոց ձեռքով, մինչև որ մերկ ու տկլոզ դառնար բոլորովին։ Ցաւալին այն է, որ հայոցմէ շատեր, երբ զօրքերու և ոստիկաններու ձեռքով հաւաքելով իր թէ պահպանելու համար կառավարութեան դուռը և անկէ ալ ուրիշ տեղեր կը տարուէին, իրենց քսակը և կիներն ալ իրենց զարդերը ու թանկ զգեստները կը մերկանային կառավարութեան դրան առջև իսկ։

ՆԻՒՐԱՏԻՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կեդրոնական սնդուկի մէջ ստացուած են.

Պ. Սնդուկ 100 անգլ. ոսկի, Երկաթ 25 օսմ. ոսկի, Երևակ 15 օսմ. ոսկի, Արծաթ 15 օսմ. ոսկի։

Աւստրիացի մի հայից 50 ֆլորին։

Պարսկաստանից՝ Գր. Իւսուֆեան 50 ֆլորին։

Արշակաւան քաղաքի կեդր. սնդուկի մէջ ստացուած են.

Հ. Կ. կացին 50 օսմ. ոսկի, Անկախ 70 դ.հ., Զեփիւռ 40 դ.հ., Լապտեր 5 դ.հ., Ոխակալ 40 դ.հ., Ֆիլիպէ 10 դ.հ., Հրահատ խ. 25 դ.հ., Հայրենասէր մը 40 դ.հ., Վարդանոյշ 20 դ.հ., Թաթուլ խ. 165 դ.հ. Բնաջինջ 20 դ.հ.։

Վիշապ քաղաքի կեդր. սնդուկի մէջ ստացուած են.

Օձէն. Փայլակ 108 դ.հ., Ցոր 100 դ.հ., Մայրապետ 540 դ.հ., Վասպուրական 40 դ.հ., Թորոս 95 դ.հ., Մովսէս 540 դ.հ., Հայկուհի 160 դ.հ., Սաթենիկ 320 դ.հ., Արմենուհի 80 դ.հ., Յովհաննէս 240 դ.հ. Բարի երևան 60 դ.հ., Գործ 95 դ.հ., Երիտասարդ 100 դ.հ., Լ. Թ. 324 դ.հ., Թաթէոս 216 դ.հ., Տարազարխ աճառ 1000 դ.հ., Զայնաւոր 108 դ.հ., Մասիս 54 դ.հ., Երկաթագործ 108 դ.հ., Մ. Վրէժ 540 դ.հ., Գեղամ 216 դ.հ., Ռուբէն 540 դ.հ., Վարդըվան 108 դ.հ., Զանգակ 108 դ.հ., Օննիկ 80 դ.հ., Թրքատեաց 69 դ.հ. 1 փարա, Դարի 324 դ.հ., Աբրահամ 108 դ.հ., Նժդեհ քաղաքէն Օձ քաղաքացի մը 108 դ.հ., Մ. Ա. Խ. 400 դ.հ., Շանթ 75 դ.հ., Հայուհեաց Ընկերութիւն 7020 դ.հ., Խոնարհաբար 216 դ.հ., Յովհաննէս 108 դ.հ., Ազատասէր 60 դ.հ., Աստղիկ 80 դ.հ., Նուրիկ 100 դ.հ., Խանդ 20 դ.հ., Աւարայր 25 դ.հ., Կ. Բ. 10 դ.հ., Ց. Շ. 10 դ.հ., Զիւթ 20 դ.հ.. Մ. Ս. 5 դ.հ., Մ. Զ. 9 դ.հ. 10 փարա, Լուսինեան 20 դ.հ., Մ. Պ. 20 դ.հ., Ց. Թ. Ն. 20 դ.հ., Պ. Ց. 3 դ.հ., Ս. Ա. 5 դ.հ., Կ. Կ. 10 դ.հ., Կիւրեղ 5 դ.հ., Ն. Զ. 4 դ.հ., Հայկազն 20 դ.հ., Ց. Զ. 20 դ.հ., Ց. Ս. 10 դ.հ., Ֆ. Լ. 10 դ.հ., Ց. Թ. 5 դ.հ., Խենթ 2 դ.հ., Մ. Վ. 5 դ.հ., Պ. Զ. 10 դ.հ., Ա. Կ. 10 դ.հ., Ս. Պ. 8 դ.հ., Ս. Վ. 20 դ.հ., Մ. Դ. 20 դ.հ., Անծանօթ 10 դ.հ., Ա. Լ. 5 դ.հ., Արգամ 6 դ.հ., Մաղ 10 դ.հ., Գլուխ 27 դ.հ., Գէորգ 20 դ.հ., Մաքսիմ 20 դ.հ., Ֆ. Խ. 20 դ.հ., Հրանդ 10 դ.հ., Արթին 20 դ.հ., Տ. Տ. 10 դ.հ., Ս. Օ. 40 դ.հ., Արտաշէտ 47 դ.հ., 10 փարա, Ես 20 դ.հ., Օղի 20 դ.հ., Ա. Ֆ. Ր. 20 դ.հ., Մորթ 20 դ.հ., Դերձան 10 դ.հ., Գաբրիէլ 20 դ.հ., Պ. Ր. 3 դ.հ., Աբիսողոմ 5 դ.հ., Մ. Փ. 5 դ.հ., Ստեփան 10 դ.հ., Մեծ կաշի 20 դ.հ., Կ. Ց. 5 դ.հ., Կ. Է. 10 դ.հ., Արտաճ 40 դ.հ., Ց. Տ. 5 դ.հ., Կ. Ֆ. 5 դ.հ., Ն. Փ. 3 դ.հ., Ե. Զ. 5 դ.հ., Ռ. Մ. Ն. 20 դ.հ., Օձ 10 դ.հ., Արարատ 10 դ.հ., Մարգար 20 դ.հ.. Գրգուռ 10 դ.հ., Արծիւ 40 դ.հ., Վարսենիկ 40 դ.հ., Գ. Խ. 20 դ.հ., Միհրան 10 դ.հ., Երևանդ 10 դ.հ., Ա. Գ. 20 դ.հ., Մահ 20 դ.հ., Սառա 20 դ.հ., Կարապետ 10 դ.հ., Արշամ 10 դ.հ., Ց. Ս. 20 դ.հ., Հմայեակ 40 դ.հ., Ռ. Բ. 40 դ.հ., Կ. Հ. 10 դ.հ., Թագուհի 20 դ.հ., Կ. Գ. 10 դ.հ., Ս. Ա. 5 դ.հ., Եղիա 20 դ.հ., Երանիկ 20 դ.հ., Օննիկ 40 դ.հ., Գէորգ 20 դ.հ.. Սարգիս 20 դ.հ., Անթառամ 10 դ.հ., Արտաճ 20 դ.հ., Բրաբիոն 20 դ.հ., Պոտոս 10 դ.հ., Միհրան 5 դ.հ., Նսատուր 40 դ.հ., Գ. 5 դ.հ., Հմայեակ 5 դ.հ., Ազատ 20 դ.հ., Հրացան 40 դ.հ., Նշան 5 դ.հ., Գ. Փ. 3 դ.հ., Հրանտ 5 դ.հ., Ոսկերիչ 20 դ.հ., Լ. Փ. 10 դ.հ., Լևոն 20 դ.հ., Աշխատասէր 20 դ.հ., Յօժարակամ 20 դ.հ., Դժոխք 20 դ.հ., Թ. 5 դ.հ., Ռշտունի 20 դ.հ., Նիկողոս 10 դ.հ., Հ. Մ. 5 դ.հ., Ա-բրամ 20 դ.հ., Գ. Խ. 20 դ.հ., Արծիւ 5 դ.հ., Ուղիղ 40 դ.հ., Գաղթական 20 դ.հ., Մ. Ֆ. 20 դ.հ., Մ. Մ. 3 դ.հ., Ա. Ֆ. 5 դ.հ., Թ. 5 դ.հ., Որսորդ 10 դ.հ., Հաւ 3 դ.հ., Պ. Անձնուէր 40 դ.հ., Վերժին 40 դ.հ., Արշակ 10 դ.հ., Լևոն 10 դ.հ., Թաթուլ 20 դ.հ., Մ. Մ. 20 դ.հ., Փար 20 դ.հ., Ֆ. Փ. 40 դ.հ., Ս. Զ. 40 դ.հ., Ց. Ղ. 20 դ.հ., Ա. Մ. 20 դ.հ., Ռ. Ե. 10 դ.հ., Ց. Մ. 10 դ.հ., Ց. Պ. 10 դ.հ., Պ. Պ. 20 դ.հ., Կ. Զ. 10 դ.հ., Երգեցող 10 դ.հ., Ճիվանի Վամբա 20 դ.հ., Տակիտոս 20 դ.հ., Դերձան 10 դ.հ., Կարապետ 8 դ.հ., Գ. Հ. 4 դ.հ., Ա. Ֆ. 10 դ.հ., Ա. Զ. 10 դ.հ., Լ. Թ. 5 դ.հ., Գ. Գ. 5 դ.հ., Փ. Ս. 5 դ.հ., Կտրիճ 20 դ.հ., Զաղացք 20 դ.հ., Աէջ 10 դ.հ., Պ. Ն. 5 դ.հ., Ա. Վ. 5 դ.հ., Բարի 20 դ.հ.. Ստեփան 10 դ.հ., Փիլիպպոս 20 դ.հ., Պերճ 10 դ.հ., Հրանդ 10 դ.հ., Թնդանօթ 20 դ.հ., Մ. Գ. 10 դ.հ., Ս. Պ. 5 դ.հ., Մ. Ֆ. Ճ. 20 դ.հ., Որբ 20 դ.հ., Հայրենասէր 20 դ.հ., Կ. Պ. 20 դ.հ., Դերձակ 5 դ.հ., Երկաթագործ 10 դ.հ., Պ. Ռ. 5 դ.հ., Լ. Փ. 5 դ.հ., Ճնճղուկ 10 դ.հ., Բ. Զ. 5 դ.հ., Խ. Գ. 5 դ.հ, Զուկ 5 դ.հ., Պեխ 5 դ.հ., Ս. Ն. 27 դ.հ., Հ. Թ. 5 դ.հ., Ց. Ա. Ս. 20 դ.հ., Խ. Զ. 5 դ.հ, Կ. Ն. 5 դ.հ., Արծիւ 20 դ.հ., Մ. Հ. 3 դ.հ., Ցարութիւն 20 դ.հ., Մ. Զ. 8 դ.հ., Գէորգ 40 դ.հ., Կ. Թ. 5 դ.հ., Պաղդասար 10 դ.հ., Ա. Գ. Կ. 240 դ.հ., Տէր Պոտոս 160 դ.հ., Արշալոյս 1 8 դ.հ., Ց. Գ. 3 դ.հ., Ս. Կ. 5 դ.հ., Թորոս 10 դ.հ., Հ. Պ. 4 դ.հ., Հ. Գ. 5 դ.հ., Ս. Ֆ. 6 դ.հ., Է. Ն. 5 դ.հ., Ց. Ց. 3 դ.հ., Քարակոփ 10 դ.հ., Մ. Թ. 30 դ.հ., Արիւն 3) դ.հ., Հ. Ս. 5 դ.հ., Ֆ. 9 դ.հ., Աբրահամ 8 դ.հ., Անթառամ 20 դ.հ, Մ. Ե. 5 դ.հ., Մելքոն 20 դ.հ., Պետրոս 30 դ.հ., Աղաւնի 10 դ.հ., Վերջին 10 դ.հ., Յովանովիչ 40 դ.հ., Եփրեմ 47 դ.հ. 10 փարա Ն. Ա. 20 դ.հ., Աէջը ցաւոտ 20 դ.հ.։

Բոլգ. Սոֆիայից յօգուտ զէյթունցիներին 200 ֆր.։

„ Եամպոլիի կոմիտէից 262 ֆրանկ։

Խնդրում ենք ծրարի վրայ գրել մեր հասցէն ներից միայն մէկն ու մէկը։

***

Նորից խնդրում ենք հասցէները գրել խիստ որոշ ու պարզ։ Այլապէս մենք ստիպուած ենք անբաւարար ու անպատասխան թողնել շատերին, որովհետև հասցէները անընթեռնելի են։

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նիւթատուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

L. Boole, 19, Russell Road, Kensington, London W.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան։